ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ.

Զարգացումը

Վերահսկողությունը

Կարգավորումը

2004

© Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ, 2004

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 3

ՀՀ բանկային համակարգը 2003 թվականին 6

Բանկային համակարգի ակտիվները 8

Բանկային համակարգի պարտավորությունները 12

Բանկային համակարգի կապիտալի համարժեքությունը 15

Բանկային համակարգի շահութաբերությունը 16

Բանկային համակարգի ֆինանսական ռիսկերը 18

ՀՀ տարածքում գործող վարկային կազմակերպությունները 20

Բանկային համակարգի վերահսկողությունը և կարգավորումը 21

Բանկային համակարգի կարգավորման դաշտի փոփոխությունները 28

Բանկային վերահսկողությունը 2003 թվականին 31

Հավելվածներ 35

ՆԱԽԱԲԱՆ

«Հայաստանի բանկային համակարգը. զարգացումը, կարգավորումը, վերահսկողությունը» ամփոփ ներկայացնում է 2003 թ. ընթացքում ՀՀ բանկային համակարգի զարգացման և բարեփոխման միտումները: Նմանատիպ վերլուծություններ ՀՀ կենտրոնական բանկը հրատարակել է նաև 1999 և 2000 թվականներին, որոնցում ներկայացված է ինչպես ՀՀ բանկային համակարգի ինստիտուցիոնալ կայացման և զարգացման պատմությունը, այնպես էլ ՀՀ մակրոտնտեսական իրավիճակը 1994 թվականից սկսած:

Արտաքին ֆինանսական ներհոսքը և ներքին տնտեսական ակտիվությունը պայմանավորեցին ծրագրվածից անհամեմատ բարձր տնտեսական աճ, որը բնութագրական է անցումային փուլը հաղթահարած երկրներին: Ծրագրված 6 %-ի փոխարեն տնտեսական աճը կազմել է 13.9%, որի պայմաններում տարեվերջին գնաճի մակարդակը, առանց հաշվի առնելու հացամթերքի գների փոփոխությունը, կազմել է 2.9% (ցորենի գնի փոփոխությունը հաշվի առնելով՝ փաստացի ցուցանիշը կազմել է 8.6%): Փաստորեն, ամբողջական պահանջարկի աճին արձագանքել է ամբողջական առաջարկը, այլապես 2003 թվականը կամփոփվեր ավելի ցածր տնտեսական աճով և գների ավելի բարձր մակարդակով: Նշենք, որ տնտեսական աճին զուգահեռ բանկային համակարգի ակտիվների աճը տարվա ընթացքում կազմել է 16.0%:

Ամենաբարձր իրական աճը գրանցվել է շինարարության ճյուղում՝ 44.4%, ընդ որում, թեև շինարարությունն առավելապես իրականացվել է արտաքին ռեսուրսների հաշվին, այնուամենայնիվ բանկային համակարգի կողմից ճյուղի վարկավորումն ավելացել է 46.7%-ով:

Վարկավորման ծավալների խոշոր աճ է գրանցվել սպառողական վարկերի ոլորտում՝ 52.5%, որն, ամենայն հավանականությամբ, պայմանավորված է բնակչության եկամուտների աճով: 2003 թվականի ընթացքում բնակչության դրամական եկամուտները, նախորդ տարվա համեմատությամբ, իրական արտահայտությամբ աճել են 9.9%-ով, իսկ դրամական ծախսերը՝ 12.2%-ով: Ընդ որում, դրամական եկամուտների 76.0%-ն ուղղվել է ապրանքների գնմանն ու ծառայությունների վճարմանը: Սպառողական վարկերի հասանելիությունը՝ մի կողմից, դրամական եկամուտների աճը՝ մյուս կողմից, էական խթան են հանդիսացել սպառողական ապրանքների ձեռքբերման համար:

Պայմանավորված անբարենպաստ բնակլիմայական գործոնով՝ գյուղատնտեսական մթերքների թողարկման իրական աճը 2003 թվականին կազմել է ընդամենը 4.3%, իսկ

գյուղատնտեսության վարկավորումը տարվա կտրվածքով նվազել է 1%-ով: Վարկավորման նվազման շարժառիթը, ըստ էության, լրացուցիչ վարկային կորուստներից խուսափելն է:

2003 թվականի արդյունքներով, ՀՆԱ առաջանցիկ աճի պայմաններում նվազել է ՀՆԱ-ում մասնավոր սպառման կշիռը՝ նախորդ տարվա 89.6%-ի փոխարեն կազմելով 84.5%: Համախառն պահանջարկի աճի պարագայում սպառման կշռի նվազումը նշանակում է խնայողությունների աճ: Դրա մասին են վկայում նաև բանկային համակարգի ժամկետային ավանդների՝ 10.3%-ով և ցպահանջ ավանդների 63.0%-ով աճը:

Ֆինանսական համակարգի զարգացման համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ռազմավարությունն ուղղված էր ինչպես բանկային համակարգի կառուցվածքային, ինստիտուցիոնալ, այնպես էլ բանկային համակարգի՝ որպես ֆինանսական միջնորդի, կայացմանը: Այս համատեքստում 2003 թվականը Հայաստանի Հանրապետության բանկային համակարգի համար կարելի է բնութագրել որպես բավական լուրջ ձեռքբերումների տարի: Սկսել են գործել վարկային կազմակերպությունները. վարկային ռիսկի նվազեցման նպատակով՝ վարկային ռեգիստրը, իսկ ավանդատուների շահերի պաշտպանության համար՝ ավանդների երաշխավորման համակարգը: Բանկային ծառայությունների ընդլայնման նպատակով պլաստիկ քարտերի քանակը կրկնապատկվել է՝ նպաստելով բանկերում ցպահանջ և էժան ռեսուրսների գոյացմանը:

Պետք է նշել, որ այս ամենին զուգահեռ գրանցվել են բանկային համակարգի ծավալների ընդլայնման, ռիսկերի կառավարման և շահութաբերության դրական միտումներ, թեև դեռևս ցածր է համակարգի ֆինանսական միջնորդության աստիճանը: Բանկային համակարգի զարգացման ներկայիս մակարդակը նախկին ԽՍՀՄ երկրների (առանց Մերձբալթյան երկրների) համեմատությամբ կարելի է համարել բավարար, որի մասին վկայում է ֆինանսական միջնորդությունը բնութագրող ցուցանիշների մակարդակը: Այսպես, Հայաստանի Հանրապետության բանկային համակարգի ընդհանուր ակտիվների և ՀՆԱ հարաբերությունը կազմում է 17.4% (ԱՊՀ 7 երկրների[1] միջին ցուցանիշը 18.3% էր, իսկ Մերձբալթյան և Կենտրոնական Եվրոպայի երկրներում՝ 74.4%, 2002 թ.): Տնտեսությունից ներգրաված (առանց այլ ֆինանսական կազմակերպությունների) ավանդների և ՀՆԱ հարաբերությունը կազմում է 11.3%, որը թեև գերազանցում է ԱՊՀ 7 երկրների 10.7% ցուցանիշը, այնուամենայնիվ անհամեմատ զիջում է Մերձբալթյան և Կենտրոնական Եվրոպայի երկրների 47.9% ցուցանիշը (2002 թ.):

Ֆինանսական միջնորդության ցածր մակարդակը հիմնականում պայմանավորում են երկու կարևոր գործոններ՝ բանկային համակարգի նկատմամբ ավանդատուների վստահության պակասը և մեծ վարկային ռիսկը, որոնց խտացված արտահայտությունը գործնականում

---

[1] Վերլուծական աշխատանքում օգտագործված ԱՊՀ, Մերձբալթյան և Կենտրոնական Եվրոպայի երկրների վերաբերյալ տվյալները վերցված են Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից հրատարակված «Financial Development in the CIS-7 Countries: Bridging the Great Divide» նյութից (2003 թ.), որտեղ ամփոփված են ԱՊՀ 7 երկրների (Հայաստան, Ադրբեջան, Վրաստան, Ղրղզստան, Մոլդովա, Տաջիկստան և Ուզբեկստան) տվյալները:

տոկոսադրույքների սպրեդի համեմատաբար բարձր մակարդակն է: Այսպես, Մերձբալթյան և Կենտրոնական Եվրոպայի երկրների 5.3 տոկոսային կետ սպրեդի համեմատությամբ Հայաստանի Հանրապետության բանկերի տոկոսադրույքների սպրեդը կրկնակի բարձր է:

Վարկատուների և վարկառուների իրավունքների պաշտպանության, համապատասխան օրենսդրական դաշտի, իրական հատվածում աուդիտի և հաշվապահական հաշվառման ստանդարտների ոչ բավարար մակարդակը, անկախ մակրոտնտեսական զարգացումներից, բարձրացնում է վարկային ռիսկը: Նման պայմաններում դիտվում է բանկերի կողմից վարկավորման աճի տեմպերի զսպում: Այսպես, Հայաստանի Հանրապետության բանկային համակարգի վարկային ներդրումների և ՀՆԱ հարաբերությունը կազմում է ընդամենը 8.0%, մինչդեռ ԱՊՀ 7 և Մերձբալթյան երկրներում այս ցուցանիշը կազմում է համապատասխանաբար 9.7% և 31.4%: Վերջին երկու տարում այսպիսի զարգացումներին զուգահեռ արտերկրի բանկերում տեղաբաշխված ակտիվների հաշվին դիտվում է առևտրային բանկերի զուտ արտաքին ակտիվների նկատելի աճ: ՀՀ առևտրային բանկերը նպատակահարմար են համարում տնտեսությունից ներգրաված միջոցները պահել ցածր եկամտաբեր, բայց համեմատաբար հուսալի ակտիվներում:

ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 2003 ԹՎԱԿԱՆԻՆ

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերը

2003 թվականի տարեվերջի դրությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում գործել են 20 առևտրային բանկեր (232 մասնաճյուղով), որոնցից 19 բանկ գործել է ընդհանուր վերահսկողության դաշտում, իսկ 1 բանկ՝ հատուկ վերահսկողության դաշտում (ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ նշանակված է ժամանակավոր ադմինիստրացիա):

Առևտրային բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների գերակշիռ մասը՝ բոլոր գլխամասերը և մասնաճյուղերի մեկ երրորդը, կենտրոնացած է Երևանում: Մարզերում գործում են միայն մասնաճյուղերը, որոնք իրականացնում են սահմանափակ բանկային գործառնություններ:

2003 թվականին.

- լուծարման գործընթաց է սկսվել հատուկ վերահսկողության դաշտում գործող «Միավորված բանկ», «Արդշինբանկ», «Կրեդիտ-Երևան» և «Կրեդիտ-Սերվիս» բանկերում,
- «Հայագրոբանկը» ինքնալուծարման որոշում է կայացրել,
- «Գլաձոր» բանկը վերակազմավորվել է վարկային կազմակերպության,
- բանկային գործունեության լիցենզիա է ստացել «Արդշինինվեստբանկը»:

Հայաստանի Հանրապետությունում առաջին անգամ տեղի է ունեցել բանկի ակտիվների և պարտավորությունների առք ու վաճառքի գործարք. «Արդշինինվեստբանկը» 2003 թվականի առաջին եռամսյակում ձեռք է բերել «Արդշինբանկի» ակտիվների և պարտավորությունների մի մասը, իսկ չորրորդ եռամսյակում՝ «Հայագրոբանկի» ակտիվների և պարտավորությունների մի մասը: Ըստ սեփականության ձևի՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող 20 առևտրային բանկերից 1-ը կոոպերատիվ բանկ է, 2-ը՝ սահմանափակ պատասխանատվությամբ, 2-ը՝ բաց բաժնետիրական, իսկ 15-ը՝ փակ բաժնետիրական ընկերություն:

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի սեփականատերերը

Հայաստանի Հանրապետության բանկային համակարգի մասնակիցներ (բաժնետերեր, փայատերեր) են 1644 ֆիզիկական և իրավաբանական անձինք, որոնցից 62-ը՝ ոչ ռեզիդենտներ: Եթե բացառենք 2 բաց բաժնետիրական ընկերության կարգավիճակ ունեցող բանկերը, ապա 18 բանկի մասնակիցների քանակը կազմում է 89 ֆիզիկական և իրավաբանական անձինք, որոնցից 30-ը՝ ոչ ռեզիդենտներ: 4 իրավաբանական անձինք (որոնցից 2-ը՝ ոչ ռեզիդենտներ) տնօրինում են 100% բաժնեմաս: Առևտրային բանկերից 10-ում մեկ բաժնետեր տնօրինում է բաժնետոմսերի 50%-ից ավելի բաժնեմասը:

Առևտրային բանկերի հաճախորդները

2003 թվականի ընթացքում բանկային համակարգի կողմից սպասարկվող իրավաբանական և ֆիզիկական անձանց քանակը ավելացել է 20.1%-ով (հիմնականում ֆիզիկական անձանց հաշվին): Տարեվերջին սպասարկվել է 405.6 հազար հաճախորդ, որոնց 92%-ը (372.4 հազարը)՝ ֆիզիկական անձինք են:

Տարվա ընթացքում բանկային հաշիվների քանակն ավելացել է 13.6%-ով և կազմել 406.8 հազար, որի 94%-ը՝ ընթացիկ և 6%-ը ժամկետային հաշիվներն են: Ընթացիկ հաշիվների քանակն ավելացել է 17.2%-ով (55.9 հազարով)՝ ի հաշիվ ֆիզիկական անձանց հաշիվների: Ժամկետային հաշիվների քանակը նվազել է 22.1%-ով (7.3 հազարով) և տարեվերջին կազմել 25.8 հազար. ընդ որում, նվազել են ինչպես ֆիզիկական անձանց, այնպես էլ իրավաբանական անձանց ժամկետային հաշիվները:

Վճարահաշվարկային համակարգ

Բանկային համակարգի կողմից տրամադրված քարտերի քանակը 2003 թվականին ավելացել է 173%-ով և կազմել 61.1 հազար: Սպասարկվող քարտերի 43%-ը «ԱրՔա» քարտերն են, որոնք 2003 թվականին ավելի քան կրկնապատկվել են: 31.12.03 թվականի դրությամբ շրջանառության մեջ գտնվել են մոտ 26 հազար՝ «ԱրՔա», 23.5 հազար՝ «VISA», 1.3 հազար՝ «MasterCard» և 10.4 հազար միջազգային այլ քարտեր: Տարեվերջին «ԱրՔա» քարտերով վճարումների միասնական համակարգին անդամակցել են 13 առևտրային բանկեր: «ԱրՔա» քարտերը թողարկել և սպասարկել են համակարգի անդամ 11 առևտրային բանկեր: MasterCard և VISA միջազգային քարտային վճարումների համակարգերին անդամակցել են Հայաստանի Հանրապետության տարածքում գործող 5-ական բանկ: 2003 թվականի ընթացքում ՀՀ տարածքում պլաստիկ քարտերով իրականացվել է 59.5 մլրդ դրամի գործառնություն, որը նախորդ տարվա համեմատ 67%-ով ավելի է: Պլաստիկ քարտերով իրականացվել է մոտ մեկ մլն գործառնություն, որը 63%-ով գերազանցել է նախորդ տարվա գործառնությունների քանակը:

ՀՀ տարածքում գործող բանկերն անդամակցում են WESTERN UNION, MONEY GRAM, ANELIK, UNISTREAM, EXPRESS և այլ համակարգերի: 2003 թվականին այս համակարգերի միջոցով Հայաստանի Հանրապետություն է փոխանցվել 175.0 մլրդ դրամ, իսկ արտասահման՝ 18.3 մլրդ դրամ, ընդ որում, ներհոսքը գերազանցել է նախորդ տարվա մեծությունը 32%-ով, իսկ արտահոսքը՝ 20%-ով: Դրամական միջոցների ներհոսքի ամենամեծ տեսակարար կշիռը բաժին է ընկել ANELIK համակարգին (40%), որին զիջում է UNISTREAM համակարգը (25.4%): Այս համակարգերի միջոցով 2003 թվականի ընթացքում փոխանցումների քանակը 35.8%-ով գերազանցել է նախորդ տարվա մակարդակը. իրականացվել է 738.6 հազար գործառնություն, որից 706.7 հազարը փոխանցումներ են դեպի Հայաստանի Հանրապետություն, իսկ 31.9 հազարը՝ Հայաստանի Հանրապետությունից դեպի արտասահման:


SWIFT համակարգին 31.12.03 թվականի դրությամբ անդամակցել են 17 առևտրային բանկեր:

Տարվա ընթացքում համակարգի միջոցով արտասահման փոխանցումները ծավալային առումով գերազանցել են նախորդ տարվա մակարդակը 34%-ով, իսկ արտասահմանից Հայաստանի Հանրապետություն կատարված փոխանցումները՝ 32%-ով:

Բանկային համակարգի ակտիվները[2]

2003 թվականին ՀՀ բանկային համակարգի ընդհանուր ակտիվներն[3] ավելացել են 16%-ով (39.0 մլրդ դրամով) և 31.12.03 թ. դրությամբ կազմել 282.1 մլրդ դրամ կամ անվանական ՀՆԱ-ի 17.3%-ը:

Գծապատկեր 1. Բանկային համակարգի ընդհանուր ակտիվների միտումները



Ընդհանուր ակտիվների աճն ապահովվել է հիմնականում բանկերում թղթակցային հաշիվների (21.5 մլրդ դրամով) և տնտեսությանը տրամադրած վարկերի (13.5 մլրդ դրամով) աճի հաշվին: Թղթակցային հաշիվների աճը պայմանավորված է բանկերում ընթացիկ իրացվելիության պահպանման նկատառումներով, քանի որ 2003 թ. պարտավորություններն աճել են գերազանցապես ցպահանջ պարտավորությունների հաշվին: Նոստրո թղթակցային հաշիվներն առանձնանում են կենտրոնացվածությամբ՝ և՛ ըստ ռեզիդենտայնության, և՛ աշխարհագրական


---


[2] Վերլուծությունում օգտագործվել են բանկերի կողմից ՀՀ ԿԲ ներկայացվող հաշվետվությունները՝ համաձայն «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ի:

[3] Բանկային համակարգի զարգացման միտումները վերլուծելիս առավել իրատեսական պատկեր ստանալու համար հիմք են ընդունվել 31.12.03 թվականի դրությամբ ընդհանուր վերահսկողության դաշտում գործող 19 բանկի ֆինանսատնտեսական ցուցանիշները (քանի որ հատուկ վերահսկողության դաշտում գործող բանկի գործառնությունները սահմանափակվում են ժամանակավոր ադմինիստրացիայի կողմից), իսկ 31.12.02 թվականի դրությամբ՝ ընդհանուր վերահսկողության դաշտում գործող 20 բանկի և հատուկ վերահսկողության դաշտում գործող «Արդշինբանկի» համընդհանուր ցուցանիշները («Արդշինբանկի» ցուցանիշների ներառումը պայմանավորված է 2003 թ. ակտիվների և պարտավորությունների զգալի մասի՝ «Արդշինինվեստբանկի» կողմից ձեռքբերման հանգամանքով):

առումով: Թղթակցային հաշիվների 97.3%-ը տեղաբաշխված է ոչ ռեզիդենտ բանկերում, իսկ ըստ երկրների՝ այդ թղթակցային հաշիվների ընդհանուր ծավալի 71.3%-ը տեղաբաշխված է ԱՄՆ-ի բարձրակարգ վարկանիշ ունեցող բանկերում, 10.0%-ը՝ Ռուսաստանի, իսկ 18.7%-ը՝ եվրոպական և այլ երկրների բանկերում:

Գծապատկեր 2, 3. Բանկային համակարգի ակտիվների ածի միտումները և տեսակարար կշիռները 2002 և 2003 թթ.





1. Կանխիկ դրամական միջոցներ, 2. Թղթակցային հաշիվներ և այլ պահանջներ բանկերի նկատմամբ (ներառյալ ԿԲ), 3. Պետական արժեթղթեր, 4. Վարկեր տնտեսությանը, 5. Հաշվարկված ստացվելիք տոկոսներ, 6. Հիմնական միջոցներ, 7. Այլ արժեթղթեր, 8. Լիզինգ, ֆակտորինգ, 9. Այլ ակտիվներ

Եկամտաբեր ակտիվների տեսակարար կշիռն ընդհանուր ակտիվներում կազմել է 80.1%: Ընդ որում, եթե բացառենք ցածր եկամտաբեր ցպահանջ ակտիվները, ապա եկամտաբեր ժամկետային ակտիվների տեսակարար կշիռը կկազմի 57.1%:

Բանկային համակարգի հիմնական միջոցները տարեվերջին կազմել են 15.8 մլրդ դրամ՝ ընդհանուր կապիտալի 31.6%-ը կամ ընդհանուր ակտիվների 5.6%-ը: Տարեվերջի դրությամբ բանկային համակարգի սեփականության հանդիսացող բռնագանձված անշարժ գույքի մեծությունը կազմել է մոտ 1.0 մլրդ դրամ:

Վարկային ներդրումները (վարկեր և դեբիտորական պարտքեր) աճել են 16.8%-ով (18.5 մլրդ դրամով) և կազմել 129.0 մլրդ դրամ, թեև տարվա ընթացքում վարկային ներդրումների տեսակարար կշիռն ընդհանուր ակտիվներում գրեթե չի փոխվել՝ կազմելով 45.7%: Դրամով վարկային ներդրումներն ավելացել են 79.2%-ով, որի արդյունքում դրամով վարկային ներդրումների տեսակարար կշիռն ընդհանուր վարկային ներդրումներում աճել է 9.6 տոկոսային կետով և տարեվերջին կազմել 27.5% (տարեսկզբին՝ 17.9%): Համեմատության համար նշենք, որ արտարժույթով վարկային ներդրումներն աճել են ընդամենը 3.1%-ով:

Տարվա ընթացքում ռեզիդենտներին տրամադրված վարկերի աճի տեմպը (21.5%-ով կամ 18.0 մլրդ դրամով) մոտ 10 անգամ գերազանցել է ոչ ռեզիդենտների վարկավորման աճի տեմպը (2.0%-ով կամ 0.5 մլրդ դրամով):

Տնտեսության ճյուղերի վարկավորման միտումները


Տնտեսության ճյուղերի վարկավորման տեսանկյունից 2003 թվականն առանձնացել է սպառողական վարկերի աննախադեպ աճով՝ 52.5%-ով (8.0 մլրդ դրամով): Նկատելի ավելացել են նաև առևտրի՝ 35.6%-ով (5.6 մլրդ դրամով), ֆինանսական՝ 147.6%-ով (4.9 մլրդ դրամով) և շինարարության՝ 46.7%-ով (1.5 մլրդ դրամով) վարկավորման ծավալները: Հատկանշական է, որ բանկային համակարգը շինարարության ճյուղում ունենալով 4.8 մլրդ դրամի վարկային ներդրումներ, բավականին շատ երաշխավորություններ է տրամադրել շինարարությանը (մոտ 3.5 մլրդ դրամ): Էներգետիկայի, քիմիական և մետալուրգիայի ճյուղերում վարկավորման նվազման արդյունքում գրանցվել է արդյունաբերության ճյուղի վարկավորման 7.5%-ով (2.4 մլրդ դրամով) նվազում:

Ըստ տնտեսության ճյուղերի վարկավորման՝ Հերֆինդալ-Հիրշմանի կենտրոնացվածության գործակիցը[4] համակարգի համար բավականին ցածր է՝ 0.14: Նույն ցուցանիշի մեծությունը ըստ բանկերի միջինի կազմել է 0.28, ինչը վկայում է, որ որոշ բանկեր դեռևս վարկավորման ճյուղային կենտրոնացվածության համեմատաբար բարձր մակարդակ ունեն: Նշենք նաև, որ 2002 թվականի համեմատ բանկերի ճյուղային վարկավորման կենտրոնացվածության ցուցանիշը նվազել է 0.08 միավորով: Տարեսկզբի համեմատ վարկերի կենտրոնացվածության զգալի նվազում գրանցվել է գրեթե բոլոր բանկերում:

---

[4] Հերֆինդալ - Հիրշմանի գործակիցն ընդունում է 0-ից 1 միջակայքում արժեքներ և բնութագրում կենտրոնացվածության աստիճանը (0-ին մոտ արժեքները նշանակում են կենտրոնացվածության ցածր աստիճան):

Գծապատկեր 4. Ռեզիդենտներին տրված վարկերի և դեբիտորական պարտքերի կառուցվածքը ըստ տնտեսության ճյուղերի



1. Արդյունաբերություն, 2. Գյուղատնտեսություն, 3. Շինարարություն, 4. Տրանսպորտ և կապ, 5. Առևտուր, 6. Ֆինանսական հատված, 7. Սպառողական, 8. Այլ ճյուղեր

Վարկային պորտֆելի որակը

Տարվա ընթացքում վարկային պորտֆելի որակը նշանակալի բարելավվել է: Բանկային ներդրումներում երկարաձգված և ժամկետանց վարկերը նվազել են 36.3%-ով (3.5 մլրդ դրամով) և կազմել 6.2 մլրդ դրամ: Երկարաձգված վարկերը նվազել են 17.6%-ով (1.0 մլրդ դրամով), իսկ ժամկետանց վարկերը՝ 63.7%-ով (2.5 մլրդ դրամով): Այս փոփոխությունների արդյունքում երկարաձգված և ժամկետանց վարկերի կշիռն ընդհանուր վարկերում կազմել է 4.8%:

31.12.03 թվականի դրությամբ չաշխատող ակտիվների (վարկեր, դեբիտորական պարտքեր) մեծությունը կազմել է 6.3 մլրդ դրամ կամ ընդհանուր վարկային ներդրումների 5.0%-ը: Չաշխատող վարկային ներդրումների 23.6%-ը բաժին է ընկել ոչ ռեզիդենտներին, իսկ 76.4%-ը՝ ռեզիդենտներին: Ռեզիդենտների վարկային ներդրումներում չաշխատող ակտիվները հիմնականում բաժին են ընկել սպառողական, արդյունաբերության և առևտրի ոլորտներին, որոնք համապատասխանաբար կազմում են 30% (1.4 մլրդ դրամ), 24% (1.1 մլրդ դրամ) և 19% (935 մլն դրամ):

Միջազգային վարկային ծրագրերը

ՀՀ-ում երկարաժամկետ դրամական միջոցների ընդլայնման և դրանց կարիքը զգացող տնտեսության ճյուղերի զարգացման համար կարևոր խթան է միջազգային ֆինանսական կազմակերպություններից նպատակային ներգրավված միջոցների աճը: ՀՀ տարածքում գործող 9 բանկ սպասարկում է Լինսի հիմնադրամի, «Գերմանիա-հայկական հիմնադրամի», Համաշխարհային բանկի, «Եվրասիա» հիմնադրամի, ԱՄՆ գյուղդեպարտամենտի, Վերակա-

ռուցման և զարգացման եվրոպական բանկի, Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի, «Շոր Օվերսիզ Քորփորեյշն» հոլդինգի կողմից իրականացվող վարկային ծրագրերը, որոնք ընդգրկում են տնտեսության գրեթե բոլոր ոլորտները: Ընդհանուր վարկային ներդրումների կառուցվածքում 2003 թվականին 5.4 տոկոսային կետով ավելացել է երկարաժամկետ (1 տարի և ավելի) վարկային ներդրումների տեսակարար կշիռը և կազմել 38.0%, որում, իհարկե, անմասն չեն վերոնշյալ վարկային ծրագրերը:

Միջազգային վարկային ծրագրերով տրամադրած վարկերի ընդհանուր ծավալի 66%-ը բաժին է ընկնում «Գերմանա-հայկական հիմնադրամին», իսկ ըստ տնտեսության ճյուղերի՝ վարկային ներդրումների հիմնական մասը տրամադրվել է առևտրին՝ 38.2%, գյուղատնտեսությանը՝ 26.0% և սննդի ոլորտին՝ 16.8%:

Բանկերի կողմից միջազգային ծրագրերի շրջանակներում տրամադրված վարկերի ծավալն ավելացել է 21%-ով և տարեվերջին կազմել մոտ 21.2 մլրդ դրամ կամ ընդհանուր վարկերի 16.4%-ը: Այս վարկերի վերադարձելիության աստիճանն անհամեմատ բարձր է, ինչի մասին վկայում է ժամկետանց վարկերի 0.3% կշիռը: Միջազգային ծրագրերի շրջանակներում տրամադրված վարկերի 84.0%-ն ունի 1 տարուց ավելի, 15.6%-ը՝ 6 ամսից մեկ տարի և 0.4%-ը՝ մինչև 6 ամիս ժամկետայնություն:

Ընդհանուր առմամբ, միջազգային վարկային ծրագրերի շրջանակներում ներկայումս ներգրավված բանկերի միջոցով (բացման օրվանից մինչ 31.12.03 թվականը) տրամադրվել են մոտ 49.5 մլրդ դրամի վարկեր, որոնք ապահովել են 98.8% վերադարձելիություն:

Ներդրումները արժեթղթերում

Հայաստանի Հանրապետության պետական արժեթղթերում ներդրումների ծավալները գրեթե չեն փոփոխվել, և աճելով ընդամենը 0.3%-ով, տարեվերջին կազմել են 31.3 մլրդ դրամ (ներառված են նաև ռեպո համաձայնագրերով ձեռք բերված և վաճառված արժեթղթերը): Նման միտումները հիմնականում պայմանավորված են Հայաստանի Հանրապետության պետական գանձապետական պարտատոմսերի եկամտաբերության նվազմամբ, ինչպես նաև ակտիվների մյուս խմբերի աննախադեպ աճով:

Բարձր ռիսկային համարվող այլ արժեթղթերում 2003 թվականին ներդրումների ծավալները, նվազել են 89.4%-ով՝ տարեվերջին կազմելով ընդամենը 461 մլն դրամ:


Բանկային համակարգի պարտավորությունները

2003 թվականի ընթացքում բանկային համակարգի ընդհանուր պարտավորություններն աճել են 13.4%-ով և տարեվերջին կազմել 232.0 մլրդ դրամ: Ե՛վ դրամով, և՛ արտարժույթով պարտավորություններն աճել են 13.4%-ով, ինչի արդյունքում ընդհանուրի մեջ դրամով և արտարժույթով պարտավորությունների տեսակարար կշիռները փոփոխության չեն ենթարկվել:

Ակնհայտ է դոլարայնացման բարձր մակարդակի պահպանումը, քանի որ դրամով պարտավորությունների տեսակարար կշիռն էականորեն զիջում է արտարժույթով պարտավորությունների կշռին և կազմում ընդամենը 27%:


Թեև վերջին տարիներին որոշ բանկեր լուծարվել են, այնուամենայնիվ պահպանվել է բանկային համակարգի նկատմամբ ձևավորված վստահությունը: Դրա մասին է վկայում այն հանգամանքը, որ ընդհանուր պարտավորությունների աճին նպաստել է ֆիզիկական անձանց համախառն ցպահանջ և ժամկետային ավանդների (34.6%-ով) և իրավաբանական անձանց ավանդների (9.6%-ով) աճը:

Գծապատկեր 5. Բանկային համակարգի պարտավորությունների աճի միտումները




Տարվա ընթացքում բանկային համակարգի ընդհանուր ավանդները (ներառյալ բանկային հաշիվները) ավելացել են 21.4%-ով և տարեվերջին կազմել 188.0 մլրդ դրամ, որի 75.1%-ը ռեզիդենտների և 24.9%-ը ոչ ռեզիդենտների ավանդներն են: 2003 թվականի յուրահատուկ դրսևորումներից է ցպահանջ պարտավորությունների 30.7%-ով (25.9 մլրդ դրամով) աճը, որտեղ գերակշռում են ֆիզիկական անձանց նկատմամբ ցպահանջ պարտավորությունները: Ցպահանջ պարտավորությունների աճին հիմնականում նպաստել է անհատ ձեռնարկատերերի գործունեության զգալի ակտիվացումը: Քարտային հաշիվների քանակի աճի վրա էական ազդեցություն է ունեցել տարբեր կազմակերպությունների կողմից քարտային համակարգով աշխատավարձի տրամադրումը: Ընդհանուր պարտավորությունների կառուցվածքում ցպահանջ պարտավորությունների առաջանցիկ աճի արդյունքում վերջինիս տեսակարար կշիռն ավելացել է 6.2 տոկոսային կետով:

Գծապատկեր 6. Բանկային համակարգի ցպահանջ ավանդների աճի միտումները




Ժամկետային ավանդների աճը զիջել է ցպահանջ ավանդների աճին և կազմել 7.2 մլրդ դրամ (10.3%), որից 6.5 մլրդ դրամով աճը պայմանավորված է ֆիզիկական անձանց ժամկետային ավանդներով: 31.12.03 թվականի դրությամբ ներգրավված ժամկետային ավանդները կազմել են 77.6 մլրդ դրամ կամ ընդհանուր պարտավորությունների 33.4%-ը:

Գծապատկեր 7. Բանկային համակարգի ժամկետային ավանդների աճի միտումները



31.12.03 թվականի դրությամբ բանկային համակարգի ընդհանուր պարտավորություններում ծախսատար պարտավորությունների տեսակարար կշիռը կազմել է 91.7%: Ցածր ծախսատար ցպահանջ պարտավորությունների բացառման դեպքում ծախսատար ժամկետային պարտավորությունների տեսակարար կշիռը կկազմի 43.9%:

Գծապատկեր 8. Բանկային համակարգի ընդհանուր պարտավորությունների կառուցվածքը



1. Բանկային թղթակցային հաշիվներ, 2. Այլ պարտավորություններ բանկերի նկատմամբ (ներառյալ ԿԲ), 3. Ցպահանջ պարտավորություններ, 4. Ժամկետային պարտավորություններ, 5. Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ, 6. Հաշվարկված վճարվելիք տոկոսներ, 7. Այլ պարտավորություններ

Բանկային համակարգի կապիտալի համարժեքությունը

2003 թվականի ընթացքում բանկային համակարգի հաշվեկշռային ընդհանուր կապիտալն ավելացել է 30.0%-ով (11.6 մլրդ դրամով) և կազմել 50.1 մլրդ դրամ:

Ընդհանուր կապիտալի աճին նպաստել են կանոնադրական հիմնադրամի 2.0 մլրդ դրամով աճը և ընթացիկ տարվա 6.5 մլրդ դրամ շահույթը: Մեծ է նաև «Արդշինբանկի» լուծարման նշանակությունը, որը 31.12.02 թվականի դրությամբ ունեցել է 5.6 մլրդ դրամ կուտակված վնաս: 2003 թվականին բանկի լուծարման հետևանքով նշված վնասը ընդհանուր կապիտալի հաշվարկում ներառված չէ: Տարվա ընթացքում 5 առևտրային բանկեր 1.5 մլրդ դրամի շահաբաժիններ են բաշխել, որից 87%-ը՝ 1 բանկի կողմից:

Առևտրային բանկերի կողմից կանոնադրական հիմնադրամի համալրման հիմնական նախապայմանը 2003 թվականի հուլիսի 1-ից ընդհանուր կապիտալի նվազագույն սահմանաչափի (2.0 մլն ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի) ապահովման պահանջն էր:

31.12.03 թ. դրությամբ բանկային համակարգի կանոնադրական հիմնադրամի մեծությունը կազմել է 36.8 մլրդ դրամ, ընդ որում, ոչ ռեզիդենտների մասնակցությունը նախորդ տարվա համեմատությամբ նվազել է մոտ 2.1 տոկոսային կետով և կազմել 46.7%:

Համակարգի ընդհանուր կապիտալի և ընդհանուր ակտիվների հարաբերակցությունը (լևերեջի գործակիցը) 31.12.03 թվականի դրությամբ կազմել է 17.8%: Լևերեջի գործակիցը հիմնականում

բարձր է փոքր բանկերում, որոնք չեն կարողանում ակտիվների և պարտավորությունների ընդլայնման համար մրցակցել խոշոր բանկերի հետ:

Հայաստանի Հանրապետության բանկերը կապիտալացվածության բարձր մակարդակ ունեն, ինչի մասին են վկայում համարժեքության նորմատիվների պահանջվող մակարդակը բավականաչափ գերազանցող ցուցանիշները: Այսպես, 31.12.03 թվականի դրությամբ բանկային համակարգի ընդհանուր կապիտալի համարժեքության ցուցանիշը կազմել է 34.1%, իսկ հիմնական կապիտալի համարժեքության ցուցանիշը՝ 32.6%, որոնց պահանջվող նորմատիվային ցուցանիշներն են համապատասխանաբար 12% և 8%: Կապիտալի վտանգվածության գնահատման առումով նշենք, որ բանկային համակարգի չաշխատող ակտիվների ամբողջությամբ անհուսալի դասակարգելու դեպքում ստացվող վնասը կազմում է նորմատիվային ընդհանուր կապիտալի 7.6%-ը:

Բանկային համակարգի շահութաբերությունը[5]

2003 թվականին բանկային համակարգն ապահովել է շահութաբերության բարձր մակարդակ. բանկային համակարգի չբաշխված շահույթը կազմել է 6.5 մլրդ դրամ[6]: Բանկային համակարգի շահութաբերությունն ըստ ակտիվների (չբաշխված շահույթի հարաբերությունն ակտիվների միջին տարեկան մեծությանը) կազմել է 2.7%, իսկ ըստ կապիտալի (չբաշխված շահույթի հարաբերությունը կապիտալի միջին տարեկան մեծությանը)՝ 14.4%: Նույն ցուցանիշները 2002 թվականին կազմել են համապատասխանաբար 2.4% և 13.3%: Բանկային համակարգի զուտ գործառնական մարժան[7] կազմել է 4.1%:

Տարվա ընթացքում շահույթով աշխատել է 16 բանկ, իսկ վնասով՝ 3 բանկ: Տարին շահույթով եզրափակած բանկերի չբաշխված շահույթը կազմել է 6.9 մլրդ դրամ, վնասով եզրափակած բանկերի ընդհանուր վնասը՝ 408 մլն դրամ:

Շահութաբեր բանկերի շահույթի Հերֆինդալ-Հիրշմանի կենտրոնացվածության գործակիցը ցածր է՝ 0.13 միավոր:

Նախորդ տարվա համեմատ, 2003 թվականին համախառն եկամուտներն ավելացել են 19.7%-ով, իսկ համախառն ծախսերը՝ 15.4%-ով: Տոկոսային եկամուտները, ոչ տոկոսային եկամուտները և ակտիվների հնարավոր կորուստների պահուստներից վերադարձը, նախորդ տարվա համեմատ, ավելացել են գրեթե համամասնորեն՝ 19.8%-ով:


---

[5] 2002 թ. շահութաբերության ցուցանիշներում ներառված չեն «Արդշինբանկի» ցուցանիշները:

[6] Եթե հաշվի առնենք հատուկ վերահսկողության դաշտում գործող բանկի 2003 թ. 546 մլն դրամ շահույթը, ապա 2003 թվականին բանկերի համընդհանուր շահույթը կկազմի 7.1 մլրդ դրամ:


[7] Զուտ գործառնական մարժան հավասար է զուտ տոկոսային և զուտ ոչ տոկոսային եկամուտների գումարի և ընդհանուր ակտիվների մեծության հարաբերությանը:

Գծապատկեր 9. Շահութաբերության ցուցանիշները՝ ըստ 16 շահութաբեր բանկերի



Ծախսային մասում աճը համամասնորեն չի բաշխվել. ոչ տոկոսային ծախսերի մեծությունը և ակտիվների հնարավոր կորուստների (ԱՀԿ) պահուստին մասհանումներն ավելացել են համապատասխանաբար 16.0%-ով և 25.5%-ով: Իսկ տոկոսային ծախսերը նվազել են 2.9%-ով՝ պայմանավորված տոկոսադրույքների նվազմամբ: Հարկ է նշել, որ ավանդների ներգրավման տոկոսադրույքների նվազումն առավել արտահայտված է, քան վարկերի տոկոսադրույքների նվազումը:

Գծապատկեր 10. Բանկային համակարգի ծախսերը և եկամուտները




Բանկային համակարգի շահույթի աճը պայմանավորված է հիմնականում զուտ տոկոսային եկամուտների կտրուկ ավելացմամբ, որը նախորդ տարվա նույն ցուցանիշը գերազանցել են 35.2%-ով (3.9 մլրդ դրամով):

Տնտեսությանը տրամադրած վարկերից բանկային համակարգի ստացած տոկոսային եկամուտները, նախորդ տարվա համեմատ, աճել են 25.0%-ով (3.2 մլրդ դրամով) և կազմել տոկոսային եկամուտների 71.2%-ը (2002 թվականին՝ 68.2%-ը): Ժամկետային ավանդների դիմաց վճարվելիք տոկոսային ծախսերը, նախորդ տարվա համեմատ, նվազել են 7.2%-ով (352 մլն դրամով) և կազմել տոկոսային ծախսերի 61.2%-ը (2002 թվականին՝ 64.1%):

Բանկային համակարգի միջնորդավճարները, 2002 թվականի համեմատ, ավելացել են 19.7%-ով (1.4 մլրդ դրամով)՝ ոչ տոկոսային եկամուտներում կազմելով 65.1%: Հաշվեգրված աշխատավարձը և դրան հավասարեցված միջոցները նախորդ տարվա համեմատ ավելացել են 16.5%-ով (834 մլն դրամով) և ապահովել ոչ տոկոսային ծախսերի 35.5%-ը: Հատկանշական է, որ բանկային համակարգի աշխատակիցների ուսուցման ծախսերը, նախորդ տարվա համեմատ, ավելացել են 22.1%-ով և կազմել 53.3 մլն դրամ:

Գծապատկեր 11. Բանկային համակարգի ծախսերի և եկամուտների կառուցվածքը



Բանկային համակարգի ֆինանսական ռիսկերը

ՀՀ բանկային համակարգի ֆինանսական ռիսկերի (իրացվելիության, արտարժութային, տոկոսադրույքի, վարկային) ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ներկայումս բանկային համակարգում առանցքային հիմնախնդիրներից է վարկային ռիսկը:

2003 թվականին բանկային համակարգի զուտ մասհանումները գերազանցելով նախորդ տարվա նույն ցուցանիշը 55.3%-ով՝ կազմել են 3.2 մլրդ դրամ: Առանց ակտիվների հնարավոր կորուստների պահուստին կատարված զուտ մասհանումների՝ բանկային համակարգի չբաշխված

շահույթը 49.7%-ով կգերազանցեր չբաշխված շահույթի փաստացի մեծությունը և կկազմեր 9.7 մլրդ դրամ:

Տարվա ընթացքում շարունակվել են վարկային ռիսկի նվազման նախորդ տարիներին դրսևորված միտումները՝ ընդհանուր վարկերի և դեբիտորական պարտքերի մեջ դասակարգված ակտիվների տեսակարար կշիռը նվազել է 2.1 տոկոսային կետով և կազմել 3.3%, իսկ ընդհանուր կապիտալի նկատմամբ՝ 12.8%: Մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափի ցուցանիշն ունի ընդունելի մակարդակ՝ 31.12.03 թվականի դրությամբ՝ 12.5% (առավելագույնը՝ 20%), իսկ բանկի հետ կապված մեկ անձի գծով ռիսկի առավելագույն չափի ցուցանիշը կազմել է նորմատիվային կապիտալի 2.4%-ը (առավելագույնը՝ 5%):

Արտարժութային ռիսկի տեսանկյունից նշենք, որ 2003 թվականին ՀՀ դրամի՝ այլ արժույթների նկատմամբ փոխարժեքի տատանումների հետևանքով ընդհանուր վերահսկողության դաշտում գործող բանկերի ընդհանուր վնասը կազմել է 513 մլն դրամ՝ բանկային համակարգի նորմատիվային կապիտալի 1.1%-ը: Արտարժույթի ռիսկի գնահատման VAR (Value at risk) մեթոդիկայով կատարված հաշվարկները ցույց են տալիս, որ դրամի փոխարժեքի տատանումների հետևանքով բանկային համակարգի արտարժույթի վերագնահատման գծով վնասները 95% հավանականությամբ չեն կարող գերազանցել 156 մլն դրամի սահմանաչափը: Նշված գնահատումը կարող է ենթարկվել որոշ շեղումների՝ պայմանավորված այն հանգամանքով, որ հաշվարկների հիմքում ընկած են 31.12.03 թվականի դրությամբ բանկերի կողմից ներկայացված արտարժութային բաց դիրքերը, որոնք տարվա ընթացքում կարող են ենթարկվել հնարավոր փոփոխությունների:

Արտարժութային ռիսկի վերաբերյալ իրատեսական պատկեր ունենալու նպատակով 2003 թվականի սեպտեմբերից առևտրային բանկերն արտարժույթի տնօրինման նորմատիվը սահմանում են ինչպես ածանցյալներով ճշգրտված դիրքերի, այնպես էլ հաշվեկշռային դիրքերի (առանց ածանցյալների) նկատմամբ: 31.12.03 թվականի դրությամբ բանկային համակարգի առաջին խմբի բաց դիրքը կազմել է նորմատիվային կապիտալի 4.5%-ը, երկրորդ խմբի բաց դիրքը՝ 1.3%-ը, իսկ համախառն արտարժութային դիրքը՝ 5.8%-ը, ընդ որում, համախառն արտարժութային դիրքի առավելագույն պահանջվող մակարդակը 25% է, իսկ երկրորդ խմբի բաց դիրքի առավելագույն պահանջվող մակարդակը՝ 5%:

Բանկային համակարգի իրացվելիության ռիսկը ցածր է, քանի որ բանկային համակարգը տիրապետում է բարձր իրացվելի ակտիվների զգալի ծավալների (126.5 մլրդ դրամ), որոնք լիովին բավարար են իրացվելիության հիմնախնդրից զերծ մնալու համար: 2003 թվականին բանկային համակարգի ընդհանուր իրացվելիության ցուցանիշն ավելանալով 5.0 տոկոսային կետով՝ տարեվերջին կազմել է 48.1%: Ցպահանջ պարտավորությունների աճի պարագայում ընթացիկ իրացվելիության ցուցանիշը նվազելով 4.8 տոկոսային կետով՝ տարեվերջին կազմել է 101.4%: Այնուամենայնիվ և՛ ընդհանուր, և՛ ընթացիկ իրացվելիության ցուցանիշները բարձր են նորմատիվային պահանջվող մակարդակից և իրացվելիության հիմնախնդրի առաջացման վտանգ չեն ներկայացնում:

Տոկոսադրույքի ռիսկի վերլուծությունը ցույց է տալիս, որ առևտրային բանկերը մեծ ռիսկեր չունեն այդ ոլորտում: Ակտիվների և պարտավորությունների ժամկետայնությունը երկար չէ, որը հնարավորություն է ստեղծում հաճախակի վերանայել տոկոսադրույքները՝ հետևելով շուկայական փոփոխություններին: Բանկային համակարգի 2003 թվականի զուտ տոկոսային եկամուտները գերազանցել են նախորդ տարվա նույն մեծությունը 35.2%-ով՝ հիմնականում պայմանավորված ցածր ծախսատար ցպահանջ պարտավորությունների և բարձր եկամտաբեր սպառողական ու առևտրի վարկերի աճով: Միևնույն ժամանակ, տոկոսադրույքի ռիսկի գնահատման դյուրացիայի մեթոդիկայով կատարված գնահատումները ցույց են տալիս, որ ակտիվների և պարտավորությունների միջին կշռված ժամկետայնության ճեղքվածքը կազմում է դրական մեծություն (մոտ 1 տարի), ինչը վկայում է, որ շուկայական տոկոսադրույքների տատանումները զգալի ազդեցություն չեն թողնի բանկային համակարգի կապիտալի տնտեսական արժեքի վրա: Հաշվարկները վկայում են, որ ընդհանուր շուկայական տոկոսադրույքների (ակտիվների և պարտավորությունների) 2%-ով նվազման դեպքում բանկային համակարգի կապիտալի տնտեսական արժեքը կավելանա 380 մլն դրամով:

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող վարկային կազմակերպությունները

2003 թվականի հունվարի 1-ից «Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքն ուժի մեջ մտնելուն պես Հայաստանի Հանրապետությունում սկսվեց վարկային կազմակերպությունների լիցենզավորման գործընթացը:

31.12.03 թվականի դրությամբ գործել են վեց վարկային կազմակերպություններ, որոնցից երկուսը՝ լիզինգային: Վարկային կազմակերպությունների ընդհանուր ակտիվների մեծությունը կազմել է 3.5 մլրդ դրամ կամ բանկային համակարգի ակտիվների 1.3%-ը: Վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի մեծությունը կազմել է 2.2 մլրդ դրամ, պարտավորությունների մեծությունը՝ 1.3 մլրդ դրամ: Տրամադրված վարկերի ընդհանուր ծավալը կազմել է 1.5 մլրդ դրամ, իսկ լիզինգի և ֆակտորինգի ընդհանուր ծավալը՝ 945 մլն դրամ: Վարկային կազմակերպությունների տեղաբաշխած վարկերի և լիզինգի ընդհանուր ծավալի 32.7%-ը տրամադրվել է արդյունաբերությանը, 20.2%-ը՝ սպառողական ոլորտին, 12.0%-ը՝ գյուղատնտեսությանը, 11.4%-ը՝ առևտրին, իսկ 23.8%-ը՝ այլ ճյուղերին:

2003 թվականի արդյունքներով չորս վարկային կազմակերպություններ աշխատել են շահույթով (223 մլն դրամ), երկու վարկային կազմակերպություններ՝ վնասով (391 մլն դրամ):

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի» և «Բանկերի և բանկային գործունեության» մասին Հայաստանի Հանրապետության օրենքներով առևտրային բանկերի (ինչպես նաև Կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված այլ կազմակերպությունների) լիցենզավորման, գործունեության կարգավորման և դադարեցման, բանկային գործունեության վերահսկողության իրավասությունները լիազորված են Կենտրոնական բանկին: Վերը նշված և բանկային գործունեությունը կարգավորող այլ օրենքների ու ենթաօրենսդրական ակտերի հիման վրա Կենտրոնական բանկը հանդիսանում է բանկային գործունեության կարգավորման և վերահսկողության բացառիկ մարմինը: Բանկային հաստատությունների նկատմամբ վերահսկողության և կարգավորման գործընթացը կրում է անընդհատ բնույթ՝ բանկային հաստատության լիցենզավորման փուլից մինչև գործունեության դադարեցման ընթացակարգերը:

Բանկային վերահսկողությունն իրականացնող և վերահսկողական գործընթացին աջակցող ստորաբաժանումների գործառույթները

Կենտրոնական բանկն իր լիազորությունների սահմաններում ապահովում է բանկային համակարգի կայունության, իրացվելիության, վճարունակության և բնականոն գործունեության անհրաժեշտ պայմաններ, պաշտպանում վարկատուների և ավանդատուների շահերը: Այս խնդիրների իրականացման շրջանակներում բանկային վերահսկողության համար Կենտրոնական բանկի պատասխանատու և վերահսկողական գործընթացին աջակցող ստորաբաժանումներ են՝ Բանկային վերահսկողության, Բանկային մեթոդաբանության և վերլուծությունների և Իրավաբանական վարչությունները: Նշված ստորաբաժանումների հիմնական խնդիրը Կենտրոնական բանկի կողմից բանկային գործունեության կարգավորման և վերահսկողության գործառույթի իրականացման մեթոդաբանական և կազմակերպական ապահովումն է:

Բանկային վերահսկողության բնականոն գործընթացների ապահովման համար Իրավաբանական վարչության հիմնական խնդիրներն են.

- ✓ բանկային օրենսդրության, ենթաօրենսդրական ակտերի մշակումը և զարգացումը,
- ✓ Կենտրոնական բանկ - բանկեր (ինչպես նաև Կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված այլ կազմակերպություններ) հարաբերությունների ընթացքում վիճահարույց հարցերի շրջանակներում Կենտրոնական բանկի շահերի պաշտպանությունը:

Բանկային մեթոդաբանության և վերլուծությունների վարչության խնդիրներն են.

- ✓ բանկային համակարգի, այլ ֆինանսական կազմակերպությունների զարգացումներին հարիր բանկային վերահսկողության և կարգավորման մեթոդաբանական գործիքների հարստացումը, կատարելագործումը,
- ✓ միջազգային լավագույն փորձի հիման վրա բանկային համակարգի զարգացումներին զուգընթաց օրենքների և ենթաօրենսդրական ակտերի առաջարկությունների մշակումը,
- ✓ բանկային վերահսկողության և կարգավորման բնագավառում առկա խնդիրների բացահայտումը և դրանց լուծման նպատակով առաջարկությունների մշակումը,
- ✓ բանկերի հեռանկարային զարգացման ծրագրերի կազմումը, ՀՀ բանկային համակարգում առկա խնդիրների լուծման տարբերակների հետազոտության և միջազգային փորձի ուսումնասիրության հիման վրա ինստիտուցիոնալ նոր տարրերի ներդրման և զարգացման ուղիների մշակումը, անհրաժեշտ մեթոդաբանական աշխատանքների իրականացումը,
- ✓ բանկային համակարգի զարգացման ուղղությունների վերլուծությունը, ինչպես նաև ռիսկային ոլորտների բացահայտումը և վերլուծությունը:

Ըստ էության, վերը նշված երկու վարչություններն աջակցում են բանկային վերահսկողության գործընթացին մեթոդաբանական, վերլուծական և իրավական առումներով: Բուն վերահսկողական գործընթացներն իրականացվում են Բանկային վերահսկողության վարչության կողմից.

- ✓ բանկային և այլ ֆինանսական կազմակերպությունների լիցենզավորում,
- ✓ բանկային և այլ ֆինանսական կազմակերպությունների գործունեության վերահսկողություն,
- ✓ բանկային և այլ ֆինանսական կազմակերպությունների գործունեության դադարեցում:

Այս երեք ստորաբաժանումները սերտ համագործակցում են իրար հետ, պարբերաբար կազմակերպում քննարկումներ վիճահարույց խնդիրների, գործող և նոր վերահսկողական մեթոդների, գործիքների զարգացման, մշակման ընթացակարգերի շուրջ:

Բանկային և այլ կազմակերպությունների լիցենզավորումը

Բանկային և այլ կազմակերպությունների լիցենզավորումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի «Բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը» կանոնակարգ 1-ի հիման վրա: Այս աշխատանքների պատասխանատու ստորաբաժանումը Բանկային վերահսկողության վարչության լիցենզավորման և բանկային ռեգիստրի բաժինն է:

Կենտրոնական բանկի խորհուրդը հավանություն է տալիս այնպիսի բանկերի հիմնադիրների միջնորդագրերին, որոնց.

- ✓ հիմնադիրները չունեն վատ համբավ և քրեորեն հետապնդելի չեն,
- ✓ կապիտալում կատարված ներդրումներն ունեն օրինական ծագում,
- ✓ տնտեսական ծրագիրը իրատեսական է և բավարարում է Կենտրոնական բանկի պահանջներին,
- ✓ ապագա բանկի ներքին կազմակերպական կառուցվածքը բավարար է ստորաբաժանումների միջև բնականոն հարաբերությունների ապահովման և ռիսկերի արդյունավետ կառավարման համար,
- ✓ գործադիր մարմինը և ղեկավարները պրոֆեսիոնալ են, բավարարում են Կենտրոնական բանկի սահմանած պահանջներին,
- ✓ ներկայացված հիմնադիր փաստաթղթերն արժանահավատ են և չեն պարունակում կեղծ տվյալներ:

Բանկի, բանկի մասնաճյուղի, օտարերկրյա բանկի մասնաճյուղի (ինչպես նաև Կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված այլ կազմակերպությունների) կողմից նշանակվող կամ ընտրվող ղեկավարների թեկնածուների, արժութային դիլերների որակավորման, մասնագիտական համապատասխանության ստուգումը կատարում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի Վերահսկողության և լիցենզավորման հանձնաժողովը: Որակավորման պահանջները յուրաքանչյուր տարի թարմացվում և արդիականացվում են Բանկային մեթոդաբանության և վերլուծությունների վարչության կողմից՝ առավելագույնս համապատասխանեցվելով միջազգային չափորոշիչներին և Հայաստանի բանկային համակարգի զարգացմանը:

Բանկային և այլ կազմակերպությունների վերահսկողությունը

Կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված բանկերի և այլ կազմակերպությունների հեռակա վերահսկողությունն իրականացվում է Բանկային վերահսկողության վարչության չորս բաժինների կողմից. երեք բաժինները վերահսկում են բանկային հաստատությունները (ինչպես նաև Կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված այլ կազմակերպությունները), չորրորդ բաժինը՝ նորաստեղծ վարկային կազմակերպությունները:

Հեռակա վերահսկողությունն իրականացվում է բանկերից և վարկային կազմակերպություններից ստացված տեղեկատվության (հաշվետվությունների և այլ ձևով) հիման վրա, բանկի գործունեության շարունակական վերլուծությունների միջոցով՝ բանկի ֆինանսական վիճակի, ռիսկերի մակարդակի գնահատման ու բանկային գործունեությունը կարգավորող օրենքների և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխանելիության ստուգման նպատակով: Հեռակա վերահսկողության իրականացման համար օրենքով սահմանված կարգով, ինչպես նաև «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ի, «Վարկային կազմակերպությունների հաշվետվությունները, դրանց ներկայացումը և

հրապարակումը» կանոնակարգ 15-ի հիման վրա վերահսկվող մարմինները Կենտրոնական բանկի Վիճակագրության վարչությանն են ներկայացնում հաշվետվական ձևեր՝ սահմանված բովանդակությամբ և ներկայացման ժամկետներով: Դրանք համապատասխան ստուգումներից հետո ներկայացվում են Բանկային վերահսկողության և Բանկային մեթոդաբանության և վերլուծությունների վարչություններին: Բանկերի և վարկային կազմակերպությունների տնտեսական նորմատիվները, դրանց սահմանաչափերն ու հաշվարկման կարգը սահմանվում են «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ի և «Վարկային կազմակերպությունների գործունեության կարգավորումը, վարկային կազմակերպությունների գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 14-ի համաձայն:

Բանկերի գործունեության նկատմամբ հեռակա վերահսկողության ընթացքում բացահայտվում են ոչ միայն բանկի ֆինանսական ցուցանիշների շարժերը, մասնավորապես, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ակտերով ամրագրված սահմանաչափերից շեղումները, այլ նաև ուսումնասիրվում են դրանց պատճառները, գնահատվում փոփոխությունները և մշակվում համապատասխան միջոցառումների պլան՝ գնահատված ռիսկերը կառավարելու նպատակով: Հեռակա վերահսկողությունն ուղղված է նաև բանկի հետագա ֆինանսական վիճակի, ռիսկերի գնահատմանն ու վերլուծությանը:

Բանկերից ստացված տեղեկատվության, ինչպես նաև վերահսկողների մասնագիտական եզրակացությունների հիման վրա հաշվարկվում է բանկի ցուցանիշների ամփոփ գնահատականը՝ CAMELS-ը: 3 միավորից ցածր գնահատական ստանալու դեպքում Կենտրոնական բանկի կողմից մերժվում է բանկի տարածքային ստորաբաժանման բացման միջնորդագիրը, իսկ 2 և ցածր լինելու դեպքում բանկը համարվում է անվճարունակ:

Հեռակա վերահսկողությամբ հայտնաբերված ռիսկերի առավել համապարփակ ուսումնասիրության, պատճառների բացահայտման նպատակով, ինչպես նաև Կենտրոնական բանկի նախագահի կարգադրությամբ հաստատված բանկերի ստուգումների ժամանակացույցի հիման վրա բանկերում և Կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված այլ կազմակերպություններում իրականացվում են ստուգումներ: Կենտրոնական բանկի խորհրդի կամ Կենտրոնական բանկի նախագահի որոշման հիման վրա Բանկային վերահսկողության վարչության պետը նշանակում է վերստուգող խմբի ղեկավար, որն իր հերթին առաջարկություններ է ներկայացնում վերստուգող խմբի կազմի վերաբերյալ, կազմում վերստուգման ծրագիր և աշխատանքների ժամանակացույց:

Վերստուգման ծրագիրը հաստատում է Կենտրոնական բանկի վերահսկողության և լիցենզավորման հանձնաժողովը, բացառությամբ այն ստուգումների, որոնք իրականացվում են, օրինակ, իրավապահ մարմինների պահանջով: Յուրաքանչյուր ստուգման ավարտից հետո վերստուգող խմբի կողմից պատրաստվում է հաշվետվություն՝ «Բանկերում վերստուգումների իրականացման ձեռնարկում» (2003 թ.) ներկայացված կարգով:

Բանկի վերահսկողությունն իրականացնելիս գնահատվում է բանկի ներքին հսկողության համակարգի, իրականացվող գործընթացների և տարբեր ոլորտների գործունեությունը կարգավորող ներքին քաղաքականությունների, ընթացակարգերի և կարգերի գործողության որակը:

Բանկերի վերահսկողության ընթացքում ուսումնասիրվում են բանկերի ակտիվային գործառնությունների, պարտավորությունների գծով հնարավոր ռիսկերը, ավանդային պայմանագրերի արժանահավատությունը և պատշաճ ձևակերպումը, խոշոր պարտատերերի, բանկի հետ փոխկապակցված անձանց և կազմակերպությունների, համակարգչային և տեղեկատվական համակարգերի գծով ձևավորվող, հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների, վճարային համակարգերի, միջոցների էլեկտրոնային փոխանցումների, ներքին և արտաքին աուդիտի գծով ռիսկերը և այլն: Առանձնահատուկ ուշադրության են արժանանում բանկի կառավարման համակարգի վերլուծությունը և դրա հետ կապված ռիսկերի բացահայտումը, մասնավորապես՝ բանկի խորհրդի և գործադիր ղեկավարության միջև իրավունքների և պատասխանատվության սահմանազատումը:

Բանկային գործունեության դադարեցման գործընթացներն իրականացվում են «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին», «Բանկերի և բանկային գործունեության մասին», «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրեքների, ինչպես նաև «Անվճարունակ բանկերի և վարկային կազմակերպությունների ժամանակավոր ադմինիստրացիայի ձևավորման կարգն ու ժամկետները, ժամանակավոր ադմինիստրացիայի ղեկավարի կողմից ներկայացվող հաշվետվությունները» կանոնակարգ 7-ի համաձայն: Նշված օրենսդրական ակտերով սահմանվում են բանկի լուծարման և անվճարունակության հիմքերը, սնանկությունը, ժամանակավոր ադմինիստրացիայի գործողության կարգը և բանկային գործունեության դադարեցման հետ կապված այլ ընթացակարգեր: Բանկն անվճարունակ ճանաչելուն պես նրա կառավարումն անցնում է ժամանակավոր ադմինիստրացիային, որը նշանակում է Կենտրոնական բանկը: Բանկի վերահսկողությունը շարունակում է իրականացնել Բանկային վերահսկողության վարչությունը: Բանկի անվճարունակության հիմք են հանդիսանում հիմնական կապիտալի 50 տոկոս և ավելին սպառելը, պարտատերերի օրինական պահանջները բավարարելու անկարողությունը, պարտադիր պահուստավորման պարբերական խախտումները, բանկի ցուցանիշների ամփոփ գնահատականը (CAMELS) Կենտրոնական բանկի խորհրդի կողմից սահմանված չափից՝ 2 միավորից ցածր լինելը:


Վերահսկողության և լիցենզավորման հանձնաժողովը

Բանկային վերահսկողության ղեկավարումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վերահսկողության և լիցենզավորման հանձնաժողովը, որը նախագահում է Կենտրոնական բանկի նախագահը: Հանձնաժողովն իր գործունեությունն

իրականացնում է նիստերի միջոցով, որոնք գումարվում են ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան շաբաթը մեկ անգամ: Լիցենզավորման հանձնաժողովի անդամներ են վերահսկողության ոլորտում ներգրավված վերոնշյալ 3 կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները, աշխատակիցները: Հանձնաժողովը քննարկում է.

- ✓ բանկերի ստեղծմանը նախնական հավանություն տալու, բանկերի մասնաճյուղերը գրանցելու և լիցենզավորելու հարցերը,
- ✓ բանկի ղեկավարների, արժութային դիլերների որակավորման և մասնագիտական համապատասխանության և գրանցման հարցերը,
- ✓ բանկի կողմից թույլ տրված խախտումները, խախտում թույլ տված բանկի նկատմամբ պատժամիջոց կիրառելու կամ չկիրառելու նպատակահարմարությունը,
- ✓ Կենտրոնական բանկի կողմից այլ կազմակերպությունների լիցենզավորման և գրանցման հարցերը,
- ✓ Կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված այլ կազմակերպությունների կողմից թույլ տրված խախտումները, դրանց առկայության դեպքում՝ վերահսկվող կազմակերպության բացատրությունները և առարկությունները, նրանց նկատմամբ պատժամիջոց կիրառելու կամ չկիրառելու նպատակահարմարությունը,
- ✓ «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և «Բանկերի կամ օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը» կանոնակարգ 1-ով նախատեսված փոփոխությունների գրանցման հարցերը,
- ✓ Կենտրոնական բանկի այլ իրավական ակտերով նախատեսված լիազորություններից բխող հարցերը:

Վերահսկողության և լիցենզավորման հանձնաժողովի կառուցվածքը



Բանկային համակարգի կարգավորման դաշտի փոփոխությունները

Հայաստանի Հանրապետության բանկային համակարգի կարգավորման դաշտի զարգացման և կատարելագործման տեսանկյունից 2003 թվականը շատ արդյունավետ տարի էր: Ձեռնարկված միջոցառումներն ուղղված են եղել հիմնականում լավագույն միջազգային փորձի ներդրմանը, ֆինանսական համակարգի կայունությանը, բանկային վերահսկողության և օրենսդրական, ենթաօրենսդրական դաշտերի արդյունավետության բարձրացմանը:

2003 թվականի հունվարի 1-ից իր գործունեությունն է սկսել վարկային ռեգիստրը, որի հիմնական նպատակը վարկային ռիսկի նվազեցումն է՝ առևտրային բանկերի համար ապահովելով այնպիսի տեղեկատվական համակարգ, որի տվյալների հիման վրա հնարավոր կլինի խուսափել անպարտաճանաչ վարկառուներից: Վարկային ռեգիստրի միջոցով փորձ է արվում ՀՀ տարածքում ստեղծել փոխառուների վարկային պատմության տեղեկատվական բազա: Վարկային ռեգիստրի տվյալների արժանահավատությունը պահպանելու նպատակով իրենց վարկային պատմության մասին տեղեկատվություն կարող են ստանալ նաև վարկառուները, որոնք անհրաժեշտության դեպքում կարող են բողոքարկել սխալ ներկայացված տեղեկատվությունը:

Համաձայն «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի՝ 2003 թվականի հուլիսի 1-ից բանկերը սկսել են իրականացնել ֆիզիկական անձանց ավանդների երաշխավորման համակարգի երաշխիքային վճարումները: Այս համակարգի ներդրումը կօգնի լուծել կարևորագույն խնդիր՝ պաշտպանել Հայաստանի Հանրապետության բանկային համակարգի ավանդատուների շահերը, ինչը կնպաստի բանկային հաստատությունների նկատմամբ բնակչության վստահության ամրապնդմանը:

Հայաստանի Հանրապետության բանկային համակարգի զարգացման, ինչպես նաև արտաքին ներդրումների ներգրավման տեսակետից խիստ կարևոր է, որպեսզի բանկային համակարգը լինի առավել թափանցիկ և հասկանալի՝ արտասահմանյան գործընկերների համար: Այս գործընթացի մի մասն է Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման ստանդարտները Միջազգային հաշվապահական հաշվառման ստանդարտներին համապատասխանեցնելը:

Տարվա ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի խորհուրդը հաստատել է մի շարք հաշվապահական հաշվառման ստանդարտներ, որոնք հնարավորություն են տալիս բանկերի կողմից իրականացվող գործարքների հաշվապահական հաշվառումը կատարել Միջազգային հաշվապահական հաշվառման ստանդարտներին համապատասխան: Դրանք են. ՀՀՀՀՍ 14 «Սեգմենտային հաշվետվություններ», ՀՀՀՀՍ 19 «Աշխատակիցների հատուցում», ՀՀՀՀՍ 26 «Թոշակային հատուցումների հաշվառումը և հաշվետվությունը», ՀՀՀՀՍ 29 «Ֆինանսական հաշվետվությունները գերսղաճային պայմաններում», ՀՀՀՀՍ 35 «Ընդհատվող գործառնություններ», ՀՀՀՀՍ 38 «Ոչ նյութական ակտիվներ», ՀՀՀՀՍ 40 «Ներդրումային գույք»:

Հաշվապահական հաշվառման ստանդարտներին համապատասխանեցնելու և բանկերի կողմից իրականացվող նոր բանկային գործառնությունների (մասնավորապես՝ արտարժութային

սվոփի) ճիշտ հաշվառման նպատակով վերաձայվել են ՀՀ տարածքում գործող բանկերի հաշվապահական հաշվառման հաշվային պլանը և դրա կիրառման հրահանգը:

2003 թվականի հունվարին ուժի մեջ է մտել ՀՀ տարածքում գործող վարկային կազմակերպությունների հաշվապահական հաշվառման հաշվային պլանը և կիրառման հրահանգը:

Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից հրապարակվող հաշվետվությունները ՀՀՀՀՍ-ին, և հետևաբար միջազգային լավագույն փորձին համապատասխանեցնելու նպատակով մշակվել և հաստատվել են ինչպես բանկերի, այնպես էլ վարկային կազմակերպությունների՝ հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների օրինակելի ձևերը և դրանց լրացման ցուցումները: Կատարված աշխատանքի շնորհիվ 2003 թվականի չորրորդ եռամսյակից բանկերը և վարկային կազմակերպությունները միջանկյալ և տարեկան ֆինանսական հաշվետվությունները հրապարակում են ՀՀՀՀՍ-ին համապատասխան: Ակնկալվում էր, որ միջազգային պրակտիկային համապատասխան՝ բանկերն ավելի շատ տեղեկատվություն կբացահայտեն ոչ միայն աղյուսակների, այլև ավելի մատչելի ծանուցումների տեսքով: Սակայն սպասելիքները, ցավոք, չիրականացան:

Կարգավորման դաշտի կատարելագործման, Բազելյան սկզբունքներին և նոր հաշվային պլանին համապատասխանեցնելու նպատակով փոփոխություններ են կատարվել նաև բանկային գործունեությունը կարգավորող ենթաօրենսդրական ակտերում:

«Բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը» կանոնակարգ 1-ով նախատեսվել է 2003 թվականից բանկերի ղեկավարների մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման քննությունների անցկացման գործընթացում ներգրավել Հայաստանի բանկերի միությանը: Կարևորելով Հայաստանի Հանրապետության բանկային համակարգի ղեկավար աշխատակիցների մասնագիտական պատրաստվածության անհրաժեշտությունը՝ արդիականացվել և վերանայվել են նաև մասնագիտական որակավորման քննությունների հարցաշարերը:

2003 թվականին փոփոխություններ են կատարվել նաև «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ում: Մասնավորապես, արտարժութային դիրքի հաշվարկն իրականացվում է ինչպես ածանցյալ գործիքները (սվոփ, ֆյուչերս, ֆորվարդ, օպցիոն) ներառելով, այնպես էլ՝ առանց դրանց: Այս քայլը բավականին արդյունավետ էր, քանի որ որպես հետևանք՝ բանկերը զգալիորեն նվազեցրին «կեղծ» ածանցյալների կնքումը, և այժմ հնարավոր է ստանալ ճշգրիտ պատկերացում բանկերի արտարժութային դիրքերի, և հետևաբար ռիսկի վերաբերյալ: Մի շարք փոփոխություններ են կատարվել նաև կարգի դրույթների հստակեցման և կատարելագործման նպատակով: Այսպես, որոշակի փոփոխություններ են արվել մեկ փոխառուի և նրա հետ փոխկապակցված անձանց պարտավորությունների սահմանման մեջ, նորմատիվային կապիտալի հաշվարկի ժամանակ ընդհանուր կապիտալից նվազեցվող տարրերի գծով, բանկի ընդհանուր և հիմնական

կապիտալների համարժեքության նորմատիվների հաշվարկում և այլն: Կանոնակարգով հնարավորություն է տրվում բանկերի ակտիվների ռիսկի դասերը ճշգրտել ըստ միջազգային վարկանիշային կազմակերպությունների վարկանիշների (վարկանիշային կազմակերպությունների ցանկը հաստատվել է Կենտրոնական բանկի խորհրդի կողմից):

Կանոնակարգ 2-ում և Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի հաշվապահական հաշվառման հաշվային պլանում վերը նշված փոփոխություններն արտացոլելու, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները Կենտրոնական բանկի վերահսկողների և վերլուծաբանների համար առավել արդյունավետ դարձնելու համար փոփոխություններ են կատարվել նաև Կանոնակարգ 3-ով սահմանված հաշվետվական ձևերում: Հաշվապահական հաշվառման հաշվային պլանի փոփոխությունների արդյունքում վերանայվել են նաև առևտրային բանկերի համախմբված հաշվետվությունների ձևերը:

2003 թվականին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը նախաձեռնել է ՀՀ բանկային համակարգի կայունության և հետագա զարգացման համար կարևորագույն գործընթաց՝ բանկերում ներքին հսկողության համակարգի ներդրում: Այս գործընթացի անհրաժեշտությունը բխում է հիմնականում տեսչական ստուգումների ընթացքում արձանագրված բանկերի ներքին հսկողության համակարգերի անկատարությունից կամ, որոշ դեպքերում, նաև իսպառ բացակայությունից: Դրա նպատակն է՝ ապահովել բանկերում ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները, արդյունավետ և անկախ ներքին աուդիտի առկայությունը, խթանել բանկերին կատարելագործելու ներքին հսկողության համակարգը՝ փոփոխվող միջավայրին համապատասխան:

2003 թվականին կատարելագործվել է նաև բանկերի հեռանկարային զարգացման ծրագրերի կազմման կարգը: Փոփոխությունները հիմնականում պայմանավորված են նախորդ տարիներին հեռանկարային զարգացման ծրագրերի կազմման ընթացքում բանկերի կողմից առաջադրված խնդիրներով: Կատարված բարեփոխումների արդյունքում առավել հստակեցվել են բանկերի ցուցանիշների կանխատեսման մեթոդները, ընդհանրացվել կանխատեսվող հոդվածները:

Բանկային վերահսկողությունը 2003 թվականին

2003 թվականի ընթացքում հետևողական միջոցառումներ են իրականացվել բանկային վերահսկողության կատարելագործման և արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

Բանկային վերահսկողությունը նպատակաուղղված է բանկային համակարգի (ներառյալ վարկային կազմակերպությունները) կայունության, իրացվելիության, վճարունակության և բնականոն գործունեության ապահովմանը: Այս նպատակների իրագործման համար, ինչպես նշվել է նախորդ գլխում, տարվա ընթացքում վերանայվել են բանկային գործունեությունը կարգավորող ենթաօրենսդրական ակտերը:

Բանկային վերահսկողության ռազմավարական խնդիրներից է բանկերի խոշորացումը, որի իրագործման համար սահմանված ժամանակացույցով 2003 թվականի հուլիսի 1-ից բանկերի ընդհանուր կապիտալի նվազագույն սահմանաչափն ավելացվել է 350 հազար ԱՄՆ դոլարին համարժեք դրամով և կազմել 2 մլն ԱՄՆ դոլարին համարժեք դրամ:

2003 թվականին Կենտրոնական բանկը ՀՀ տարածքում գործող բանկերում և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերում վերստուգումներն իրականացնում է հանձայն «Բանկերում վերստուգումների իրականացման ձեռնարկի», որի նպատակն է, որպեսզի վերահսկողությունը, բանկի անցյալ և ընթացիկ խնդիրները լուծելուց բացի, կրի նաև կանխարգելիչ բնույթ:

Ձեռնարկը կազմված է այնպես, որ բանկի տարբեր ոլորտների վերահսկողությունը իրականացնելիս վերահսկողները ստանան պարզ և ճշգրիտ պատկեր բանկի ներքին հսկողության համակարգի, իրականացվող գործընթացների և այդ ոլորտների գործունեությունը կարգավորող բանկի ներքին քաղաքականությունների, ընթացակարգերի և կարգերի մասին: Վերահսկողները հնարավորություն ունեն ամբողջովին պատկերացնել և գնահատել բանկի ներքին հսկողության համակարգը, ներքին աուդիտի գործունեության արդյունավետությունը և պարզել՝ արդյո՞ք բանկի աշխատակիցները գործում են բանկի ղեկավարության կողմից սահմանված սկզբունքներին համապատասխան: Այսպիսի ուսումնասիրությունը բանկի ֆինանսական վիճակի, կատարված գործարքների, կառավարման արդյունավետության և ներքին հսկողության համակարգի գնահատման հնարավորություն է ընձեռում: Ըստ էության, ներքին հսկողության համակարգի արդյունավետ գործունեությունն անկյունաքար է Կենտրոնական բանկի մեկ այլ ռազմավարական խնդրի՝ բանկերում կորպորատիվ կառավարման սկզբունքների ներդրման և հետագա կիրառման համար:

Բանկերում վերստուգումները հնարավորինս արդյունավետ դարձնելու համար Ձեռնարկը մանրամասն նկարագրում է վերստուգման ծրագրի նախապատրաստման գործընթացը: Կարելի է իրականացնել բանկերի ինչպես համալիր, այնպես էլ նպատակային վերստուգումներ: Ձեռնարկն անփոխարինելի ուղեցույց է նաև ոչ փորձառու վերահսկողի համար:

2003 թվականին իրականացվել է 17 վերստուգում՝ 7 համալիր և 10 նպատակային: Տեսչական վերստուգումներ անցած առևտրային բանկերի ընդհանուր ակտիվների հանրագումարը կազմել է 85.8 մլրդ դրամ: Վերստուգումների ընթացքում արձանագրված հիմնախնդիրները հիմնականում վերաբերում են բանկերում ներքին հսկողության համակարգի անկատարությանը և կորպորատիվ կառավարման սկզբունքների բացակայությանը:

Բանկային վերահսկողության վարչության աշխատակիցների ծանրաբեռնվածությունը

Ցուցանիշ	2002 թվական	2003 թվական
1. Բանկային վերահսկողության վարչության աշխատակիցների թիվը	34	39
2. Բանկային համակարգի ընդհանուր ակտիվները (տարեկան միջին)	195.6 մլրդ դրամ	253.6 մլրդ դրամ
3. Բանկային վերահսկողության վարչության մեկ աշխատակցի միջին ծանրաբեռնվածությունը (2 : 1)	5.8 մլրդ դրամ	6.5 մլրդ դրամ
4. Տարվա ընթացքում իրականացված վերստուգումների քանակը,	19	17
այդ թվում՝		
համալիր ստուգում	4	7
նպատակային ստուգում	15	10
5. Ստուգման մասնակիցների թիվը	31	42
6. Ստուգում անցած առևտրային բանկերի ընդհանուր ակտիվների մեծությունը վերստուգման պահին	36.0 մլրդ դրամ	85.8 մլրդ դրամ
7. Մեկ վերահսկողի միջին ծանրաբեռնվածությունը վերստուգման ընթացքում (5 : 6)	1.2 մլրդ դրամ	2.0 մլրդ դրամ

2003 թվականին լիցենզավորվել են 6 վարկային կազմակերպություններ և մեկ առևտրային բանկ:

Վերահսկողության զարգացման շրջանակներում կատարելագործվել են նաև հեռակա վերահսկողության մի շարք գործիքներ, մասնավորապես, ԲԳՄՀ-ն և CAMELS-ը՝ վաղ ահազանգման համակարգի կարևորագույն տարրերը, ռիսկերի գնահատման նոր մեթոդիկաներով համալրվել է վերահսկողության գործիքակազմը: Բանկային վերահսկողության գործիքների կատարելագործման անհրաժեշտությունը պայմանավորված է նաև առևտրային բանկերի զարգացմամբ, մատուցվող ծառայությունների քանակի և տեսականու ընդլայնմամբ: Մյուս կողմից՝ վերահսկողության գործիքների կատարելագործման համար ուղենիշ է ժամանակակից միջազգային փորձը, որն առավելագույնս կիրառելի է Հայաստանի բանկային համակարգի համար:

CAMELS համակարգով գնահատման համար կատարվում են բանկի ամփոփ և բազմակողմանի վերլուծություններ, ինչի արդյունքում բացահայտվում են բանկի պոտենցիալ ռիսկային ոլորտները և խնդիրները: CAMELS-ի նոր մեթոդաբանությունը թույլ է տալիս վերահսկողներին բանկի գնահատականը որոշելիս կիրառել այնպիսի սուբյեկտիվ չափանիշներ, ինչպիսիք են՝ օբյեկտիվ գնահատականների մեծությունը պայմանավորող գործոնների միտումները, նոր հայտնի դարձած տեղեկատվությունը (որը չի արտացոլվում օբյեկտիվ գնահատականներում, բայց կարող

է ազդել բանկի ֆինանսական ցուցանիշների վրա) և այլն: Եթե օբյեկտիվ ցուցանիշները հավաստի և արժանահավատ չեն արտահայտում բանկի խնդիրները և պոտենցիալ ռիսկերը, ապա գնահատվում է, թե օբյեկտիվ ցուցանիշները ինչ գնահատական կստանային, եթե բացահայտված խնդիրները հաշվի առնվեին: Բանկի ցուցանիշների ամփոփ գնահատումը կատարվում է ամսական կտրվածքով, որից հետո ՀՀ կենտրոնական բանկը բանկին հայտնում է իր անհատական ամփոփ գնահատականը:

Արձագանքելով վերջին տարիներին Հայաստանի բանկային համակարգում առկա խնդիրներին՝ ՀՀ ԿԲ-ում մշակվել և ներդրվել է «Բանկերը «պրոբլեմային» որակելու, վերջինիս նկատմամբ վերահսկողական գործընթացի իրականացման ուղեցույցը», որն անդրադառնում է բանկը «պրոբլեմային» դասակարգելու չափանիշներին և սահմանում անհրաժեշտ միջոցառումների ցանկը: «Պրոբլեմային» բանկերի գործունեության արդյունավետության բարձրացման և թափանցիկության ապահովման նպատակով «Անվճարունակ բանկերի և վարկային կազմակերպությունների ժամանակավոր ադմինիստրացիայի ձևավորման կարգն ու ժամկետները, ժամանակավոր ադմինիստրացիայի ղեկավարի կողմից ներկայացվող հաշվետվությունները» կանոնակարգ 7-ով սահմանվել են անվճարունակ բանկի՝ ֆինանսական առողջացման ծրագրով ներկայացվող հաշվետվությունների նկատմամբ նոր պահանջներ (մասնավորապես՝ ժամանակավոր ադմինիստրացիայի կողմից պետք է ներկայացվեն իրենց աշխատանքների արդյունքների կանխատեսումները, ապա՝ փաստացի արդյունքները):

Հեռակա վերահսկողության գործիքների համալրման և ռիսկերի գնահատման խնդիրների համատեքստում մշակվել են մի շարք մեթոդիկաներ: Մասնավորապես, ներդրվել է մոդելի միջոցով արտարժույթի ռիսկի գնահատման VAR մեթոդը, որը հաշվարկում է ապագայում արտարժույթի փոխարժեքի փոփոխությունից առևտրային բանկերի հնարավոր կորուստների առավելագույն չափը:

Դյուրացիայի մեթոդի օգնությամբ գնահատվում է բանկերի տոկոսադրույքի ռիսկը՝ տոկոսադրույքի որոշակի (ենթադրվող) փոփոխությունների դեպքում բանկերի կրած վնասների (օգուտների) չափը:

Բանկի իրացվելիության մակարդակի գնահատման համար մշակվել է ճեղքվածքի մոդելի վրա հիմնված մեթոդիկա, որը բնութագրում է բանկի ինչպես ընդհանուր իրացվելիության, այնպես էլ ակնթարթային և ժամկետային իրացվելիության մակարդակները: Առավելությունը կայանում է նրանում, որ հետևողական մոնիտորինգի դեպքում հնարավոր է բնութագրել բանկի իրացվելիության նաև հետագա սցենարները:

Մշակվել են սթրես թեսթեր՝ որոշակի սցենարների դեպքում վարկային, արտարժութային և իրացվելիության ռիսկերի գծով բանկերի առավելագույն կորուստները գնահատելու և ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված նորմատիվային խախտումները հայտնաբերելու համար:

2003 թվականի ընթացքում էական փոփոխություններ են կատարվել տվյալների ամփոփման և պահպանման ՖԻՆԱ համակարգում: Կատարելագործվել է համակարգի ծրագրային փաթեթը,

ձևավորվել է տվյալների բազան, մուտքագրվել և գործարկվել են տվյալների մշակման համակարգերը: Տարվա էական ձեռքբերումը կարելի է համարել այն, որ առևտրային բանկերից ստացվող հաշվետվություններն ամբողջությամբ մուտքագրվում և ամփոփվում են ՖԻՆԱ համակարգի միջոցով:

Համագործակցությունն այլ երկրների վերահսկողների և միջազգային կազմակերպությունների հետ

Բանկային վերահսկողության զարգացման և կատարելագործման աշխատանքների շրջանակներում Կենտրոնական բանկի վերահսկողները սերտ համագործակցում են Անդրկովկասի տարածաշրջանի և եվրոպական երկրների վերահսկողների հետ: Պարբերաբար կազմակերպվող համաժողովների, հանդիպումների ընթացքում քննարկվում են բանկային վերահսկողության հիմնախնդիրների լուծման, վերահսկողական գործիքների կատարելագործման հնարավոր ուղիները: Բանկային վերահսկողության հրատապ հիմնախնդիրների վերաբերյալ մտքերի փոխանակությունը, տնտեսական անկայունության պայմաններում ռիսկերի գնահատման տարբեր երկրների փորձի ներկայացումը խիստ օգտակար են բանկային վերահսկողության հայեցակարգի զարգացման համար: Տարբեր երկրների և միջազգային կազմակերպությունների հետ իրականացվում է կարգավորման դաշտին վերաբերող տեղեկատվության շարունակական փոխանակում: Այս համատեքստում 2003 թվականին ՀՀ կենտրոնական բանկը համաձայնագրեր է կնքել Ռուսաստանի Դաշնության և Լիբանանի կենտրոնական բանկերի հետ՝ երկուստեք տեղեկատվության և վերահսկողական փորձի փոխանակման ոլորտներում համագործակցելու վերաբերյալ:

Աշխարհի ֆինանսական կազմակերպությունների ուշադրությունը սևեռված է Բազելյան նոր համաձայնագրին (Բազել 2), որի կիրառումը նոր հորիզոններ կբացի վերահսկողության կատարելագործման համար: Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի փորձագետների կողմից ուսումնասիրվում են Բազել 2-ի՝ տարբեր երկրներում ներդրման հնարավոր ուղիները: Ակնհայտ է, որ Հայաստանի Հանրապետության բանկային համակարգը պատրաստ չէ ամբողջությամբ ընդունելու Բազել 2-ի չափանիշները, սակայն հիմնարար շատ սկզբունքներ կիրառելի են և կնպաստեն բանկային վերահսկողության արդյունավետության բարձրացմանը: Մասնավորապես, բանկային վերահսկողների կողմից վերստուգումների անցկացման կարգի, շուկայական կարգապահությանը վերաբերող մի շարք սկզբունքների կիրառումը դրական ազդեցություն կունենա բանկային վերահսկողության վրա:

Հավելվածներ

Հավելված 1

ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերը,
վարկային կազմակերպությունները և դրանց մասնաճյուղերը

31.12.2003

	Առևտրային բանկեր	**Մասնաճյուղեր**
1	Հայխնայբանկ	101
2	Արդշինինվեստբանկ	61
3	Հայէկոնոմբանկ	24
4	«Արցախ» բանկ	11
5	«Կոնվերս» բանկ	8
6	Հայգյուղփոխբանկ	8
7	Յունիբանկ	5
8	«Անելիք» բանկ	5
9	«Առէկսիմբանկ»	4
10	«Ինեկո» բանկ	2
11	«Էյչ-Էս-Բի-Սի բանկ Հայաստան»	1
12	«Պրոմեթեյ» բանկ	1
13	Հայներարտբանկ	-
14	Զարգացման հայկական բանկ	-
15	Հայինվեստբանկ	-
16	«Մելլաթ» բանկ	-
17	Էմպորիկի բանկ -Հայաստան	-
18	«ԻԹԲ» միջազգային առևտրային բանկ	-
19	Միջինվեստբանկ	-
20	Հայկապ բանկ	1
Ընդամենը		**232**

	Վարկային կազմակերպություններ	**Մասնաճյուղեր**
1	«Արֆին» վարկային միություն	-
2	«Ագրոլիզինգ» լիզինգային վարկային կազմակերպություն	-
3	«ԱԳԲԱ» լիզինգային վարկային կազմակերպություն	-
4	«ՍԵՖ ինթերնեյշնլ» ունիվերսալ վարկային կազմակերպություն	1
5	«Էքսպրես կրեդիտ» ունիվերսալ վարկային կազմակերպություն	-
6	«Գլաձոր» ունիվերսալ վարկային կազմակերպություն	-
Ընդամենը		**1**

Հավելված 2

Բանկային համակարգի ամփոփ հաշվեկշռային ցուցանիշները

հազար ՀՀ դրամ

Ցուցանիշներ		**31.12.02**	**31.03.03**	**31.06.03**	**30.09.03**	**31.12.03**	**Փոփոխությունը 31.12.03-31.12.02**	
Ակտիվներ								
Կանխիկ դրամական միջոցներ	D	3606798	3160801	3470369	4352970	4826950	1220152	33.8%
	F	10491205	11230039	12938969	12483882	12551870	2060665	19.6%
Թղթակցային հաշվի և պարտադիր պահուստների մնացորդներ	D	19168368	15099008	14979177	16820990	20734143	1565775	8.2%
	F	41142638	46055059	60114270	55398446	62396975	21254337	51.7%
Պետական արժեթղթեր		31232848	30667702	34139988	35429600	31311092	78244	0.3%
Պարտավորություններ ռեպո համաձայնագրերի գծով		-4439701	-4491503	-5680464	-4658779	-2491066	1948635	-43.9%
ՀՀ ԿԲ-ում տեղաբաշխված ավանդներ	D	0	0	1600000	1121733	100000	100000	-
Բանկերում տեղաբաշխված ավանդներ	D	68093	1233443	2013130	1475193	652247	584154	857.9%
	F	19691399	19168603	14321092	22221300	22950759	3259360	16.6%
Վարկեր՝ տնտեսությանը	D	19057449	22580556	25657147	29788920	32482437	13424988	70.4%
	F	65428081	61560115	61743142	61721454	66257317	829236	1.3%
Վարկեր՝ բանկի հետ կապված անձանց և աշխատակիցներին	D	405821	373446	631551	1155869	1375962	970141	239.1%
	F	4093297	1892592	2703396	2585234	2360374	-1732923	-42.3%
Պահուստ՝ֆոնդ		-3936700	-3550789	-3056045	-3260188	-2996054	940646	-23.9%
Այլ ակտիվներ		13420131	11407999	11783208	11068031	7651633	-5768498	-43.0%
Հաշվարկված ստացվելիք տոկոսներ	D	548761	564688	507468	782316	785522	236761	43.1%
	F	1938581	1916655	1351673	1089791	800162	-1138419	-58.7%
Հիմնական միջոցներ		15267624	14842551	15278604	15892942	15818497	550873	3.6%
Այլ արժեթղթեր		4355297	2874022	1744014	630150	461429	-3893868	-89.4%
Լիզինգ, ֆակտորինգ		1628693	1956886	1684255	1534662	4119383	2490690	152.9%
Հաշվեկշռային ընդհանուր ակտիվներ		**243168682**	**238541873**	**257924944**	**267634516**	**282149632**	**38980950**	**16.0%**
Պարտավորություններ								
Բանկերի թղթակցային հաշիվները	D	667542	487380	259342	343977	382245	-285297	-42.7%
	F	3599771	4969976	2493462	3006514	2600224	-999547	-27.8%
Ցպահանջ պարտավորություններ	D	27921581	21428877	24800907	29888031	31940690	4019109	14.4%
	F	56591321	61767791	70887068	74189524	78466297	21874976	38.7%

Պարտավորություններ բանկերի նկատմամբ		D	8105000	9449200	9959607	9666033	9050000	945000	11.7%
		F	12602500	11496832	7004632	6533883	7288727	-5313773	-42.2%
Ֆիզիկական անձանց ավանդներ		D	3757978	3874629	4135235	4216983	4137482	379504	10.1%
		F	39458301	38789722	41310892	42857960	45550489	6092188	15.4%
Իրավաբանական անձանց ավանդներ		D	6618260	7769298	10418179	9661029	7103583	485323	7.3%
		F	20547238	14975871	11950983	13832994	20820860	273622	1.3%
Այլ պարտավորություններ			23318357	21183549	26338138	23464938	23553066	234709	1.0%
Հաշվարկված վճարվելիք տոկոսներ		D	399006	456284	426591	493882	371293	-27713	-6.9%
		F	1045613	992432	805433	755232	771364	-274249	-26.2%
Հաշվեկշռային ընդհանուր պարտավորություններ			**204632468**	**197641841**	**210790469**	**218910980**	**232036320**	**27403851**	**13.4%**
Կապիտալ									
Փաստացի լրացված կանոնադրական հիմնադրամ			34736349	38378831	36733379	37528781	36769005	2032656	5.9%
Գլխավոր պահուստ			4119766	4483766	4292686	4292687	4242383	122617	3.0%
Բանկի կողմից հետգնված սեփական բաժնետոմսեր			-341562	-341562	0	0	0	341562	-
Չբաշխված շահույթ (վնաս)	ընթացիկ ժամանակա-շրջանի		-1877830	-5163658	1730362	3785632	6480851	8358681	-
	նախորդ ժամանակա-շրջանի		-673598	1321646	2052141	803742	614693	1288291	-
Հաշվեկշռային ընդհանուր կապիտալ			38536214	40900032	47755705	48723536	50113313	11577098	30.0%
Ծանուցում									
Ստացված գրավ և երաշխավորություն			193418611	202722506	213726573	231636114	236507065	43088454	22.3%
այդ թվում՝ պետ. արժեթղթեր			5994284	5361810	2919766	4835560	5598668	-395616	-6.6%
Հաշվեկշռից դուրս գրված	վարկեր		18332634	19163841	12857066	12026061	9917368	-8415266	-45.9%
	դեբիտորա-կան պարտա-վորություններ		6348902	6249745	3467327	3706580	3712817	-2636085	-41.5%
	տոկոսներ		20779121	20578321	9841973	9628885	5363307	-15415814	-74.2%
Տրամադրված երաշխավորություններ			6039997	8087986	10024997	7823212	4987041	-1052956	-17.4%
Տրամադրված գրավներ ընդամենը			2726509	2121550	564081	566815	835540	-1890969	-69.4%
	այդ թվում՝ պետական արժեթղթեր		1126489	535206	505601	509802	835540	-290949	-25.8%

Հավելված 3

Ընդհանուր կապիտալի փոփոխությունը

հազար ՀՀ դրամ

Անվանումը	**01.01.2004**
Մեծությունը ժամանակաշրջանի սկզբին[1]	
Ընդհանուր կապիտալ, այդ թվում՝	33 760 914
Հիմնական կապիտալ	31 380 759
Կանոնադրական կապիտալ	33 993 348
Ծանուցում. Իրացված բաժնետոմսերի քանակ (հատ)	4 561
Գլխավոր պահուստ	4 083 766
Չբաշխված շահույթ	(2 781 502)
Հիմնական կապիտալից նվազեցվող գումարներ	236 491
Երկարաժամկետ ստորադաս փոխատվություն	-
Բանկի կողմից հետգնված սեփական բաժնետոմսեր	(341 562)
Ոչ նյութական ակտիվներ (բացի համակարգչային ծրագրերից)	(650 089)
Այլ բանկերի կանոնադրական կապիտալներում ներդրումներ	25 800
Չօգտագործվող նյութական ակտիվներ	1 202 342
Նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքի և հիմնական կապիտալի հաշվեկշռային մեծությունը գերազանցող գումար	-
Լրացուցիչ կապիտալ	2 380 156
Վերագնահատման պահուստներ	2 410 188
Հաշվեկշռի միավորման ընթացքում առաջացած արտարժութային տարբերությունների պահուստ	-
Այլ պահուստներ	(30 032)
Երկարաժամկետ ստորադաս փոխառություն	-
Փոփոխություն ժամանակաշրջանի ընթացքում	
Ընդհանուր կապիտալ, այդ թվում	11 589 974
Հիմնական կապիտալ	11 999 032
Կանոնադրական կապիտալ	2 775 656
Ծանուցում. Իրացված բաժնետոմսերի քանակ (հատ)	(2 182)
Գլխավոր պահուստ	159 379
Չբաշխված շահույթ	9 812 802
Հիմնական կապիտալից նվազեցվող գումարներ	3 603 418
Երկարաժամկետ ստորադաս փոխատվություն	-

Բանկի կողմից հետգնված սեփական բաժնետոմսեր	341 562
Ոչ նյութական ակտիվներ (բացի համակարգչային ծրագրերից)	1 166 878
Այլ բանկերի կանոնադրական կապիտալներում ներդրումներ	416 758
Չօգտագործվող նյութական ակտիվներ	1 265 714
Նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքի և հիմնական կապիտալի հաշվեկշռային մեծությունը գերազանցող գումար	412 506
Լրացուցիչ կապիտալ	(409 058)
Վերագնահատման պահուստներ	(431 677)
Հաշվեկշռի միավորման ընթացքում առաջացած արտարժութային տարբերությունների պահուստ	-
Այլ պահուստներ	22 619
Երկարաժամկետ ստորադաս փոխառություն	-
Մեծությունը ժամանակաշրջանի վերջին[2]	
Ընդհանուր կապիտալ, այդ թվում՝	45 350 888
Հիմնական կապիտալ	43 379 790
Կանոնադրական կապիտալ	36 769 004
Ծանուցում. Իրացված բաժնետոմսերի քանակ (հատ)	2 379
Գլխավոր պահուստ	4 243 145
Չբաշխված շահույթ	7 031 300
Հիմնական կապիտալից նվազեցվող գումարներ	3 839 909
Երկարաժամկետ ստորադաս փոխատվություն	-
Բանկի կողմից հետգնված սեփական բաժնետոմսեր	-
Ոչ նյութական ակտիվներ (բացի համակարգչային ծրագրերից)	516 789
Այլ բանկերի կանոնադրական կապիտալներում ներդրումներ	442 558
Չօգտագործվող նյութական ակտիվներ	2 468 056
Նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքի և հիմնական կապիտալի հաշվեկշռային մեծությունը գերազանցող գումար	412 506
Լրացուցիչ կապիտալ	1 971 098
Վերագնահատման պահուստներ	1 978 511
Հաշվեկշռի միավորման ընթացքում առաջացած արտարժութային տարբերությունների պահուստ	-
Այլ պահուստներ	(7 413)
Երկարաժամկետ ստորադաս փոխառություն	-

[1] Ներկայացված են ընդհանուր վերահսկողության դաշտում գործող 21 բանկի տվյալները:

[2] Ներկայացված են ընդհանուր վերահսկողության դաշտում գործող 19 բանկի տվյալները:

Հավելված 4

ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի կանոնադրական կապիտալում ոչ ռեզիդենտների մասնակցությունը

հազար ՀՀ դրամ

Ցուցանիշ	31.12.02	Փոփոխությունը ժամանակաշրջանի ընթացքում	31.12.03
Կանոնադրական կապիտալը	34 309 252	2 197 169	36 506 421
այդ թվում՝ ոչ ռեզիդենտներ	16 934 088	131 143	17 065 230
ոչ ռեզիդենտների տես. կշիռը (%)	49.4%	- 2.6%	46.7%

Հավելված 5

ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի եկամուտները և ծախսերը

հազար ՀՀ դրամ

Ցուցանիշներ	31.12.02	31.12.03	Փոփոխություն
Տոկոսային եկամուտներ			
Թղթակցային հաշիվներից ստացված տոկոսներ	284 059	261 917	-7.8%
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում տեղաբաշխված միջոցներից ստացված տոկոսներ	423 775	472 784	11.6%
Առևտրային բանկերում և այլ ֆինանսական կազմակերպություններում տեղաբաշխված միջոցներից ստացված տոկոսներ	630 951	601 887	-4.6%
Տնտեսությանը տրված վարկերից ստացված տոկոսներ	14 502 850	15 956 529	10.0%
Օվերդրաֆտից ստացված տոկոսներ	645 131	491 091	-23.9%
Վարկային քարտերից ստացված տոկոսներ	11 980	40 717	239.9%
Պետական գանձապետական արժեթղթերից ստացված տոկոսներ	3 086 299	3 583 888	16.1%
Հետգնման պայմանագրերից ստացված տոկոսներ	319 294	318 642	-0.2%
Լիզինգից ստացված տոկոսներ	5 088	3 645	-28.4%
Այլ տոկոսային եկամուտներ	935 078	694 914	-25.7%
Ընդամենը տոկոսային եկամուտներ	**20 844 505**	**22 426 014**	**7.6%**
Տոկոսային ծախսեր			
Թղթակցային հաշիվների դիմաց վճարված տոկոսներ	76 407	15 173	-80.1%
Բանկային հաշիվների ու ցպահանջ ավանդների դիմաց վճարված տոկոսներ	458 284	381 196	-16.8%
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկից ներգրավված միջոցների դիմաց վճարված տոկոսներ	485 836	636 953	31.1%
Հետգնման պայմանագրերի գծով պարտավորությունների դիմաց վճարված տոկոսներ	138 478	32 736	-76.4%
Առևտրային բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից ներգրավված միջոցների դիմաց վճարված տոկոսներ	529 891	343 942	-35.1%
Ժամկետային ավանդների դիմաց վճարված տոկոսներ	5 398 720	4 512 406	-16.4%
Միջազգային ֆինանսական կազմակերպություններից ներգրավված միջոցների դիմաց վճարված տոկոսներ	467 239	303 463	-35.1%
Օվերդրաֆտի դիմաց վճարված տոկոսներ	93	1 335	1335.5%
Տոկոսային ծախսեր ավանդների ապահովագրության դիմաց	0	225 297	100.0%
Հաշվեգրված, բայց չհավաքագրված չաշխատող ակտիվների տոկոսների գծով	1 310 935	557 661	-57.5%
Այլ տոկոսային ծախսեր	292 659	363 138	24.1%
Ընդամենը տոկոսային ծախսեր	**7 373 300**	**7 373 300**	**0.0%**

Զուտ տոկոսային եկամուտներ	**11 675 672**	**15 052 714**	**28.9%**
Ոչ տոկոսային եկամուտներ			
Ստացված միջնորդավճարներ	7 501 599	8 520 639	13.6%
Երաշխիքներից, հոժարագրերով, ակրեդիտիվներով գործառնություններից, հավատարմագրային կառավարման գործառնություններից ստացված եկամուտներ	296 676	347 919	17.3%
Հեջավորման ածանցյալ գործիքներից զուտ եկամուտներ	218	3 530	1519.3%
Ֆակտորինգից ստացված զուտ եկամուտներ	33 498	68 333	104.0%
Այլ կազմակերպություններում ներդրումներից ստացված եկամուտներ	15 355	54 425	254.4%
Արժեթղթերի վաճառքից ստացված զուտ եկամուտներ	112 744	236 431	109.7%
Արտարժույթի առք ու վաճառքից ստացված զուտ եկամուտներ	2 236 048	2 501 603	11.9%
Արտարժույթի վերագնահատումից ստացված դրական (բացասական) փոխարժեքային տարբերություն	-120 092	-513 863	327.9%
Հիմնական միջոցների օտարումից ստացված զուտ եկամուտներ	-469 793	8 884	-101.9%
Հիմնական միջոցների վերագնահատումից ստացված զուտ եկամուտներ	-195 513	5 509	-102.8%
Ստացված տույժեր, տուգանքներ	744 815	590 799	-20.7%
Այլ ոչ տոկոսային եկամուտներ	1 517 615	1 266 558	-16.5%
Ընդամենը ոչ տոկոսային եկամուտներ	**11 673 170**	**13 090 767**	**12.1%**
Ոչ տոկոսային ծախսեր			
Հաշվարկված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ (տրված այլ փոխհատուցումներ և սոցիալական պահանջների ֆինանսավորում)	5 389 896	5 886 662	9.2%
Գործուղման ծախսեր	251 408	337 150	34.1%
Հատկացումներ Հայաստանի Հանրապետության սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամին	712 904	684 018	-4.1%
Հարկեր, տուրքեր և այլ պարտադիր վճարներ	746 620	805 375	7.9%
Ամորտիզացիոն մասհանումներ	1 846 546	1 826 832	-1.1%
Բանկի շենքի և այլ հիմնական միջոցների վարձակալության վճար	473 514	528 567	11.6%
Գովազդային, ներկայացուցչական ծախսեր	616 728	842 913	36.7%
Գրասենյակային և տպագրական ծախսեր	330 824	352 905	6.7%
Աուդիտային և խորհրդատվական ծառայությունների գծով ծախսեր	255 042	204 322	-19.9%
Բանկի սարքավորումների սպասարկման և պահպանման գծով ծախսեր	203 597	196 811	-3.3%
Տրանսպորտային ծախսեր	266 920	250 893	-6.0%
Կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր	704 037	787 587	11.9%
Վճարված տույժեր, տուգանքներ	130 259	54 194	-58.4%
Ուսուցման ծախսեր	44 190	53 314	20.6%
Այլ ոչ տոկոսային ծախսեր	3 505 137	3 789 868	8.1%
Ընդամենը ոչ տոկոսային ծախսեր	**15 477 622**	**16 601 410**	**7.3%**

Զուտ ոչ տոկոսային եկամուտներ	**-3 804 452**	**-3 510 643**	**-7.7%**
Հատկացումներ վարկերի և դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների ընդհանուր պահուստին	4 216 497	5 165 311	22.5%
Հատկացումներ վարկերի և դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների հատուկ պահուստին	17 852 856	11 202 553	-37.3%
Հատկացումներ արժեթղթերի հնարավոր կորուստների պահուստին	47 701	21 541	-54.8%
Ընդամենը հատկացումներ	**22 117 054**	**16 389 405**	**-25.9%**
Վերադարձ վարկերի և դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների ընդհանուր պահուստից	4 025 248	4 635 761	15.2%
Վերադարձ վարկերի և դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների հատուկ պահուստից	10 538 879	8 489 341	-19.4%
Վերադարձ արժեթղթերի հնարավոր կորուստների պահուստից	13 650	28 350	107.7%
Ընդամենը վերադարձ	**14 577 777**	**13 153 452**	**-9.8%**
Զուտ մասհանումներ	**7 539 277**	**3 235 953**	**-57.1%**
Շահույթ մինչև հարկվելը	**331 943**	**8 306 118**	**2402.3%**
Շահութահարկ	911 578	1 790 459	96.4%
Զուտ շահույթ	**-579 635**	**6 515 659**	**-1224.1%**
Հաշվարկված շահաբաժիններ	6 899	2 343	-66.0%
Չբաշխված շահույթ	**-586 534**	**6 513 316**	**-1210.5%**

Հավելված 6

ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի վարկային ներդրումները և դեբիտորական պարտքերը

հազար ՀՀ դրամ

Ցուցանիշներ	Մինչև 1 տարի		1 տարի և ավելի		Ընդամենը	
	դրամով	արտարժ.	դրամով	արտարժ.	դրամով	արտարժ.
1. Ընդամենը վարկեր, ավանդներ, ֆակտորինգ, լիզինգ, ռեպո համաձայնագրեր (2+3)	21 565 930	58 618 230	13 900 314	34 955 705	35 466 244	93 573 936
1.1. Ժամկետային ակտիվներ	20 334 348	57 440 512	13 900 314	31 157 223	34 234 662	88 597 736
այդ թվում՝ վարկեր	16 470 760	34 863 434	13 791 334	29 166 947	30 262 094	64 030 382
միջբանկային վարկեր, ավանդներ, ֆակտորինգ, լիզինգ, ռեպո համած.	350 000	21 425 756	0	1 301 809	350 000	22 727 565
1.2. Երկարաձգված ակտիվներ	666 496	314 609	0	3 798 482	666 496	4 113 091
այդ թվում՝ վարկեր	385 695	310 777	0	2 830 000	385 695	3 140 777
միջբանկային վարկեր, ավանդներ, ֆակտորինգ, լիզինգ, ռեպո համած.	0	0	0	0	0	0
1.3. Ժամկետանց ակտիվներ	565 086	863 109	0	0	565 086	863 109
այդ թվում՝ վարկեր	547 838	779 922	0	0	547 838	779 922
միջբանկային վարկեր, ավանդներ, ֆակտորինգ, լիզինգ, ռեպո համած.	0	0	0	0	0	0
2. Ոչ ռեզիդենտներին տրված վարկեր, ավանդներ, ֆակտորինգ, լիզինգ, ռեպո համաձայնագրեր	622 159	22 034 104	1 965 953	2 598 077	2 588 112	24 632 181
2.1. Ժամկետային ակտիվներ	232 056	21 909 680	1 965 953	2 598 077	2 198 009	24 507 757
2.2. Երկարաձգված ակտիվներ	0	92 163	0	0	0	92 163
2.3. Ժամկետանց ակտիվներ	390 103	32 261	0	0	390 103	32 261
3. Ռեզիդենտներին տրված վարկեր, ավանդներ, ֆակտորինգ, լիզինգ, ռեպո համաձայնագրեր ըստ ճյուղերի, այդ թվում՝	20 790 705	36 245 341	12 087 427	32 696 414	32 878 132	68 941 755
3.1. Արդյունաբերություն	4 912 626	8 312 771	4 913 815	11 632 262	9 826 441	19 945 033
լեռնահանքային	22 824	1 118 700	9 335	110 313	32 159	1 229 013
էներգետիկա	1 853 450	2 471 778	2 380 900	4 040 399	4 234 350	6 512 177
սննդի	1 646 205	3 258 236	1 316 859	4 216 775	2 963 064	7 475 011
թեթև	261 664	545 275	89 602	432 391	351 266	977 666
քիմիական	34 726	52 526	9 856	150 970	44 582	203 496
հինանյութերի	225 391	211 517	332 488	681 283	557 879	892 800
թանկարժեք իրեր	40 834	137 902	184 930	24 322	225 764	162 224
մետալուրգիա	22 308	399	23 756	484 213	46 064	484 612
մեքենաշինական և էլեկտրատեխնիկական	206 296	135 236	61 460	116 979	267 756	252 215
արդյունաբերության այլ ճյուղեր	598 928	381 202	504 629	1 374 617	1 103 557	1 755 819
3.2. Գյուղատնտեսություն	732 858	3 997 374	203 436	2 775 316	936 294	6 772 690
3.3. Շինարարություն	1 574 440	667 881	540 951	2 022 178	2 115 391	2 690 059

3.4. Տրանսպորտ և կապ	232 146	88 061	49 816	297 043	281 962	385 104
3.5. Առևտուր	7 142 331	4 247 093	3 382 295	6 363 706	10 524 626	10 610 799
3.6. Հանրային սնունդ և սպասարկման այլ ոլորտներ	669 261	249 027	396 076	1 387 066	1 065 337	1 636 093
3.7. Ֆինանսական հատված	2 500 735	5 732 963	547	53 376	2 501 282	5 786 339
3.8. Սպառողական վարկեր	2 635 256	12 130 873	1 441 538	7 006 390	4 076 794	19 137 263
3.9. Տնտեսության այլ ճյուղեր	391 052	819 298	1 158 953	1 159 077	1 550 005	1 978 375

Հավելված 7

ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի եկամուտները և ծախսերը

հազար ՀՀ դրամ

Ցուցանիշներ	Չաշխատող ակտիվներ		Հետհաշվեկշռային մնացորդ	
	դրամով	արտարժ.	դրամով	արտարժ.
Չաշխատող և հետհաշվեկշիռ դուրս գրված ակտիվներ (ընդամենը)	**1 982 143**	**3 549 349**	**3 245 959**	**9 104 104**
1. Ռեզիդենտների՝ չաշխատող և հետհաշվեկշիռ դուրս գրված ակտիվներ (ընդամենը)	464 670	675 222	753 963	1 716 375
1.1. Արդյունաբերություն, այդ թվում՝	13 160	0	170 087	0
լեռնահանքային	0	0	0	136 955
էներգետիկա	224 190	286 441	359 369	542 422
սննդի	24 700	284 855	181 941	336 793
թեթև	0	19 618	170	184 520
քիմիական	4 000	0	0	6 940
շինանյութերի	124 350	4 081	10 102	514
թանկարժեք իրեր	0	0	0	25 927
մետալուրգիա	2 000	39 619	0	393 936
մեքենաշինական և էլեկտրատեխնիկական	72 270	40 608	32 294	88 368
արդյունաբերության այլ ճյուղեր	24 391	98 895	101 655	307 326
1.2. Գյուղատնտեսություն	286 900	42 763	135 534	168 674
1.3. Շինարարություն	12 673	40 858	0	53 596
1.4. Տրանսպորտ և կապ	467 541	467 884	178 635	2 012 331
1.5. Առևտուր	762	269 893	34 111	74 307
1.6. Հանրային սնունդ և սպասարկման այլ ոլորտներ	0	0	1 510	16 923
1.7. Ֆինանսական հատված	260 423	1 173 912	172 059	1 873 938
1.8. Սպառողական վարկեր	464 783	779 922	1 868 493	2 880 635
1.9. Տնտեսության այլ ճյուղեր	1 314 166	178 053	80 381	8 597 035
2. Ոչ ռեզիդենտների՝ չաշխատող և հետհաշվեկշիռ դուրս գրված ակտիվներ (ընդամենը)	1 982 143	3 549 349	3 245 959	9 104 104

Վարկերի, դեբիտորական պարտքերի և վարկային ռիսկ պարունակող հետհաշվեկշռային հոդվածների դիմաց հաշվարկվող պահուստների չափը

Ռիսկի դասերը	Վարկեր		
	Գումար	Տրված վարկերի գծով պահուստ	
		մլն դրամ	*%*
1. Ստանդարտ	116 311 522	1 163 114	1.00%
2. Հսկվող	4 183 038	418 301	10.00%
3. Ոչ ստանդարտ	869 127	173 820	20.00%
4. Կասկածելի	918 881	459 443	50.00%
Ընդամենը	**122 282 567**	**2 214 677**	**1.81%**

Ռիսկի դասերը	Դեբիտորական պարտքեր		
	Գումար	Դեբիտորական պարտքերի գծով պահուստ	
		մլն դրամ	*%*
1. Ստանդարտ	70 429 076	704 303	1.00%
2. Հսկվող	359 879	35 988	10.00%
3. Ոչ ստանդարտ	62 119	12 423	20.00%
4. Կասկածելի	17 210	8 606	50.01%
Ընդամենը	**70 868 284**	**761 320**	**1.07%**

Ռիսկի դասերը	Հետհաշվեկշռային հոդվածներ		
	Գումար	Հետհաշվեկշռային հոդվածների գծով պահուստ	
		մլն դրամ	*%*
1. Ստանդարտ	16 025 363	160 281	1.00%
2. Հսկվող	330 672	33 067	10.00%
3. Ոչ ստանդարտ	27 159	5 432	20.00%
4. Կասկածելի	48 653	24 327	50.00%
Ընդամենը	**16 431 847**	**223 106**	**1.36%**

ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի դրամական հոսքեր

01.01.2004

Դրամական հոսքեր գործառնական գործունեությունից	
Դրամական զուտ հոսքեր գործառնական գործունեությունից	**38 879 263**
Դրամական զուտ հոսքեր մինչև գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխությունը	**20 997 434**
Վարկերի դիմաց ստացված տոկոսներ	16 548 750
Ստացված զուտ կոմիսիոն գումարներ	5 985 337
Հետգնման պայմանագրերից ստացված զուտ եկամուտներ	159 078
Առևտրային նպատակով պահվող և վաճառքի համար մատչելի արժեթղթերից ստացված զուտ եկամուտներ	239 344
Արտարժույթի առք ու վաճառքից ստացված զուտ եկամուտներ	2 340 676
Հաշիվների և ներգրավված ավանդների դիմաց վճարված տոկոսներ	-5 218 436
Լիզինգային և ֆակտորինգային գործառնություններից ստացված եկամուտներ	68 545
Տեղաբաշխված ավանդների դիմաց ստացված տոկոսներ	1 028 683
Ներգրավված վարկերի դիմաց վճարված տոկոսներ	-1 083 521
Ֆինանսական գործունեության դիմաց վճարված տոկոսներ	-25 013
Վճարված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ	-5 507 685
Վճարված հարկեր	-1 801 436
Նախկինում դուրս գրված վարկերի վերադարձ	3 601 051
Նախկինում դուրս գրված դեբիտորական պարտքերի վերադարձ	395 444
Ներդրումային գործունեությունից ստացված եկամուտներ	4 264 577
Ստացված շահաբաժիններ	2 040
Դրամական զուտ հոսքեր գործառնական ակտիվների և պարտավորությունների փոփոխություններից	**17 881 829**
Վարկային ներդրումների նվազում (ավելացում)	-30 430 902
Ներգրավված ավանդների ավելացում (նվազում)	51 600 612
Հետգնման պայմանագրերով տնօրինվող արժեթղթերի նվազում (ավելացում)	1 343 198
Հետգնման պայմանագրերով վաճառված արժեթղթերի ավելացում (նվազում)	-713 850
Առևտրային նպատակով պահվող և վաճառքի համար մատչելի արժեթղթերի նվազում (ավելացում)	-1 169 577
Ֆակտորինգային գործառնությունների նվազում (ավելացում)	-1 834 770

Լիզինգի նպատակով տրամադրված ակտիվների նվազում (ավելացում)	0
Զուտ դրամական հոսքեր այլ գործառնական գործունեությունից	-912 882
այդ թվում՝ ածանցյալ գործիքների գծով	-1 374
այդ թվում՝ վճարված տույժերի և տուգանքների գծով	218 083
Դրամական հոսքեր ներդրումային գործունեությունից	
Դրամական զուտ հոսքեր ներդրումային գործունեությունից	-10 403 035
Մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթերի նվազում (ավելացում)	-1 486 100
Անժամկետ արժեթղթերում ներդրումների նվազում (ավելացում)	-636 554
Այլ բանկերում տեղաբաշխված ավանդների նվազում (ավելացում)	-3 560 348
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների օտարում (ձեռքբերում)	-4 812 847
Զուտ դրամական հոսքեր այլ ներդրումային գործունեությունից	92 814
Դրամական հոսքեր ֆինանսական գործունեությունից	
Դրամական զուտ հոսքեր ֆինանսական գործունեությունից	6 154 843
Վճարված շահաբաժիններ	-1 511 611
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկից ստացված վարկերի ավելացում (նվազում)	1 500 000
Բանկերից ստացված վարկերի ավելացում (նվազում)	-177 075
Ստացված այլ փոխառությունների ավելացում (նվազում)	852 439
Լիզինգից ստացված միջոցների ավելացում (նվազում)	20 460
Բանկի կողմից թողարկված արժեթղթերի ավելացում (նվազում)	562 266
Բաժնետերերի ներդրումները կանոնադրական հիմնադրամում	5 126 038
Զուտ դրամական հոսքեր այլ ֆինանսական գործունեությունից	-217 674
Արտարժույթի փոխանակման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	-261 207
Դրամական միջոցների հոսքերի զուտ աճ	34 369 864
Կանխիկ և կանխիկին հավասարեցված զուտ միջոցներ ժամանակաշրջանի սկզբին	68 554 513
այդ թվում՝ տնօրինման սահմանափակում ունեցող	718 986
Տարվա ընթացքում բանկային համակարգից դուրս գրված բանկերի ցուցանիշների ազդեցությունը բանկային համակարգի կանխիկ և կանխիկին հավասարեցված միջոցների վրա	-5 253 996
Կանխիկ և կանխիկին հավասարեցված զուտ միջոցներ ժամանակաշրջանի վերջին	97 670 381
այդ թվում՝ տնօրինման սահմանափակում ունեցող	1 411 074

Ծանուցում	
1. Եռամսյակի (տարվա) ընթացքում հետհաշվեկշիռ դուրս գրված ակտիվներ	8 030 638
այդ թվում՝ վարկեր	6 443 335
դեբիտորական պարտքեր	1 586 971
2. Եռամսյակի (տարվա) ընթացքում հետհաշվեկշիռ դուրս գրված ակտիվների մարում	5 196 956
այդ թվում՝ վարկեր	4 797 689
դեբիտորական պարտքեր	399 267
3. Եռամսյակի (տարվա) ընթացքում հետհաշվեկշիռ դուրս գրված տոկոսներ	1 012 412
4. Եռամսյակի (տարվա) ընթացքում հետհաշվեկշիռ դուրս գրված տոկոսների մարում	1 224 503

ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի հիմնական տնտեսական նորմատիվների մեծությունը

Ցուցանիշներ	31.12.02	31.03.03[2]	31.06.03[3]	30.09.03[3]	31.12.03[1]
Ընդհանուր կապիտալի համարժեքություն	30.5%	30.9%	39.2%	34.5%	34.3%
Հիմնական կապիտալի համարժեքություն	28.8%	29.2%	37.4%	32.7%	32.7%
Ընդհանուր իրացվելիություն	44.5%	46.2%	47.3%	49.0%	48.8%
Ընթացիկ իրացվելիություն	108.8%	112.4%	114.7%	112.9%	109.9%
Մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը	27.4%	24.7%	17.2%	15.2%	13.8%
Բանկի հետ կապված մեկ անձի գծով ռիսկի առավելագույն չափը	0.9%	2.0%	1.7%	2.0%	1.8%
Բանկի հետ կապված բոլոր անձանց գծով ռիսկի առավելագույն չափը	2.9%	4.1%	3.4%	4.7%	4.7%

[1] Ներկայացված են վերահսկողական ընդհանուր դաշտում գործող 19 բանկերի տվյալները:

[2] Ներկայացված են վերահսկողական ընդհանուր դաշտում գործող 21 բանկերի տվյալները:

[3] Ներկայացված են վերահսկողական ընդհանուր դաշտում գործող 20 բանկերի տվյալները: